

Ազգային Երեք Կուսակցություններու Յայտարարութիւն

Երկուշաբթի, Յունուար 22, 2024-ի երեկոյեան, ՌԱԿ-ի Ալթատի-նայի գրասենեակին մէջ, ՍԴԳԿ-ի, ԴՅԴ-ի եւ ՌԱԿ-ի Արեւմտեան Ամերի-կայի ղեկավարութեան ներկայացու-ցիչները ունեցան շուրջ երկփամ-եայ համոզիպում մը, որուն ընթաց-քին քննարկուեցան Արցախահայու-թեան տարագիր իրավիճակը եւ մեր տեղական ազգային կեանքը յու-զող հարցեր: Իւրաքանչիւր կուսակ-ցութեան պատուիրակութիւն կը գլխաւորուէր իր ատենապետով կամ ներկայացուցիչով, ՍԴԳԿ-էն Վազգէն Խոտանեան, ԴՅԴ-էն՝ Աւե-տիս Քէշիշեան, ՌԱԿ-էն՝ Թամար Փո-լատեան-Փերոն:

Արցախի դիմագրաւած յետ 44-օրեայ պատերազմի եւ անոր յա-ջորդած Սեպտեմբեր 2023-ի հայա-թափման արդած իրավիճակը, ու զանոնք դիմագրաւելու քաղաքա-կան, ընկերային, ու մարդասիրա-կան աշխատանքներու հրամայա-կանութիւնը անգամ մը եւս շեշ-տադրուեցան: Համադրուած ուժե-րով Արցախահայութեան ազգային իրաւունքներու վերատիրացումի մատարելը: Շեշտը դրուեցան մեր ազգային դատը առանց ընկրկումի հետապնդելու, ինչպէս նաեւ մեր պետականութիւնն ու անկախու-թիւնը առաւելագոյն ուժերու լա-րունով եւ նպատակասլաց աշխա-տանքով շարունակելուն վրայ: Ցե-ղասպան թուրքիոյ եւ անոր գոր-ծընկեր Ազդէրալի հայաջինջ քա-ղաքականութիւնը կը մնայ առկայ նաեւ այսօր: Պարտինք Արցախա-յութեան ի նպաստ մեր անմիջա-կան զօրակցութիւնը յայտնել՝ ճգնաժամը բարձրացնելով տեղա-կան, նահանգային եւ դաշնակա-ցային մակարդակներու վրայ:

Հանդիպման ընթացքին որոշ-ուեցան նախորդ տարիներուն հաս-տատուած աւանդութեամբ ու մի-ացեալ ճիգերով մեր թափ տալ տալ գա-ղութային կառոյցներու (AGC, UACLA), կազմակերպելու 2024 թուականի ապրիլեան ոգեկոչում-ները: Կը նախատեսուին նաեւ երեք կուսակցութեանց համատեղ ճիգե-րով ազգային այլ օրակարգեր տա-նիլ առաջ:

Հայ ազգն ու հայրենիքը գո-յութեան պայքարի մէջ են: Բո-լորիս ճիտին պարտքն է միասնա-կան շարքերով ծառայել հայրենի-քին ու հայութեան: Արդ, մեր կոչն է բոլորիդ համախմբուիլ մեր ազգա-յին ու միութեան կառոյցներուն շուրջ, գերադասել ազգային ու մեր իրաւունքները, եւ բերել ձեր մաս-նակցութիւնը ազգի անվտանգու-թեան եւ բարօրութեան օգտին:

**ՍԴԳԿ Արեւմտեան Ամերիկայի
Վարիչ Մարմին
ԴՅԴ Արեւմտեան Ամերիկայի
Կեդրոնական Կոմիտէ
ՌԱԿ Արեւմտեան Ամերիկայի
Շրջանային Վարչութիւն**

Փաշինեան Յայտարարեց՝ Հայաստանը Կ'երթայ Նոր Եւ Ժամանակակից Սպառազինութեան Գնահատարհով

Հայաստանը նոր եւ ժամանա-կակից սպառազինութեան եւ ռազ-մասարքի ձեռքբերման ճանապար-հով կ'երթայ, բանակի կազմաւոր-ման 32-րդ ամեակին նուիրուած միջոցառման ընթացքին ըսած է վարչապետը: Նիկոլ Փաշինեանի խօսքով՝ վերջին տարիներուն կա-ռավարութիւնը քանի մը միլիառ տոլարի գէնք-գինամթերք ձեռք բերելու պայմանագրեր կնքած է:

«Հայաստանի ռազմարդիւնա-բերական համալիրն աննախադէպ՝ մի քանի հարիւր միլիոն տոլարի պատուէր ունի Հայաստանի կառա-վարութիւնից եւ ի հարկէ, շարու-նակելու ենք ներդրումներ անել ռազմարդիւնաբերական համալի-րում», ըսած է ան:

Փաշինեան ընդգծած է, որ ուժեղ եւ մարտունակ բանակը ՀՀ ինքնիշխանութիւնը, տարած քային ամբողջականութիւնը, անկախու-թիւնը ապահովող կարեւորագոյն գործօններէն է, բաց անվտանգու-թեան տեսակէտէն երկու այլ գոր-ծօն ալ թուարկած է՝ արտաքին յարաբերութիւններ եւ վարուող քաղաքականութիւններու օրինա-կանութիւն՝ միջազգային իրաւուն-քի տեսակէտէն:

«Օրինականութիւնն, ըստ այդմ, Հայաստանի արտաքին անվ-տանգութեան ապահովման կարե-ւորագոյն գործօն պիտի լինի: Հա-յաստանի Հանրապետութիւնն ինքն իրեն պէտք է նոյնականացնի այն տարածքի հետ, որի վրայ եւ ճա-նաչուել է միջազգային հանրու-թեան կողմից: Այն է՝ Հայկական



Վարչապետ Նիկոլ Փաշինեան ելոյթ կ'ունենայ Բանակի Օրուան առթիւ

ԽՍՀ տարածքը, որը նոյնական է Հայաստանի Հանրապետութեան ինքնիշխան տարածքի հետ: Մենք պէտք է յստակ եւ աներկբայ արձա-նագրենք, որ որեւէ այլ տարածքի նկատմամբ որեւէ յաւակնութիւն չունենք եւ չենք ունենալու, եւ սա պէտք է դառնայ Հայաստանի ար-տաքին անվտանգութեան ապա-հովման ռազմավարական հիմքը», յայտնած է վարչապետը:

Նիկոլ Փաշինեան անդրադար-ձած է նաեւ Պաքոյի յայտարարու-թիւններուն՝ կապուած Հայոց բա-նակի բարեփոխումներուն, սպա-ռազինութեան եւ ռազմասարքի ձեռքբերման հետ:

«Ուժեղ եւ մարտունակ բա-նակ ունենալը իւրաքանչիւր երկ-

րի ինքնիշխան իրաւունքն է, եւ ոեւէ մէկը չի կարող կասկածի տակ դնել մեր այդ իրաւունքը: Եթէ ոեւէ մէկը կասկածի տակ է դնում մեր այդ իրաւունքը, կասկածի տակ է դնում մեր գոյութեան իրաւունքը: Այս պարագայում մեզ այլ բան չի մնայ, քան բոլոր հնարաւոր եւ անհնար միջոցներով պաշտպանել մեր պետականու-թիւնը, մեր անկախութիւնը, մեր տարած քային ամբողջականու-թիւնը», ըսած է ան:

«ՀՀ-ն իր ինքնիշխան տա-րածքից բացի, որեւէ այլ տարած-քի նկատմամբ յաւակնութիւն չու-նի, ոեւէ մէկը չպէտք է յաւակնու-

Շար.ը էջ 8

Բացառիկ եւ Շքեղ Հանդիսութեամբ Նշուեցաւ Գարրիէլ Մոլոյեանի Ծննդեան 90 Եւ Հասարակական Գործունէութեան 70-Ամեակը

Անցեալ Կիրակի, Յունուարի 28-ին, 2024, մեծարանքի բացառիկ ձեռնարկ մը տեղի ունեցաւ Փասա-տինայի ՀԿԲՄ-ի Կեդրոնի սրահէն ներս: Մօտ 200 հոգիներ ներկայ էին միջոցառումին, որ նուիրուած էր Գարրիէլ Մոլոյեանի ծննդեան 90 եւ հասարակական ու համայնքային գործունէութեան 70-ամեակին:

ՍԴՀԿ Արեւմտեան Ամերիկա-յի Վարիչ Մարմնի կողմէ կազմա-կերպուած սոյն միջոցառումին ներ-կայ հիւրերու շարքին էին Թեմիս Բարեջան Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան, Հայ Աւետ. Եկեղեցիներու Միութեան տնօրէն՝ Վեր. Հենրիկ Շահնազար-եան, ՍԴՀԿ Կեդրոնական Վարչու-թեան ատենապետ՝ Տոքթ. Համբիկ Մարաթեան, ՌԱԿ Կեդրոնական Վար-չութեան անդամ Տօքթ. Ռաֆի Պալեան, ինչպէս նաեւ ՀԲԸՄ-ի, Պոլսահայ Միութեան, Իրանահայ Միութեան, Հայ-Ամերիկեան Թան-գարանի եւ այլ կազմակերպու-թիւններու ներկայացուցիչներ:

Օտար հիւրերու շարքին էին



Գարրիէլ Մոլոյեանի 90-ամեակի կարկանդակի հատումի պահուն

ԱՄՆ Գոնկրէսի անդամ ձիւտի Չու, Գալիթորնիոյ Խորհրդարանի ան-դամ՝ Քրիս Հոլտըն, Փասատինայի Քաղաքապետ՝ Վիգոր Կորտօ եւ քաղաքական այլ անձնաւորու-թիւններու ներկայացուցիչներ:

Վաստակաշատ ընկերոջ սոյն

գեղեցիկ միջոցառման հանդիսա-վարներ՝ Լենա Մանուկեան Հայե-րէնով եւ Հերի Ունել Անգլերէնով վարեցին երեկոյն ու ջերմ խօսքե-րով ողջունեցին ներկաները, որոնք

Շար.ը էջ 6

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Ընդդիմութեան Քարոզը՝ Աջապահեանի Շուրթերով. Անորոշ Տարածքով Պատմական Հայրենիք, Թե՛ Պետականութիւն

ՎՈՎԱ ՅԱՎՈՐԵԱՆ

Նոր Սահմանադրութիւն ընդունելու մասին վարչապետի յայտարարութիւնից, Հայոց պատմութիւն առարկան Հայաստանի պատմութիւն վերանունանելու նախագծից յետոյ կրկին ակտիւացան խօսակցութիւնները Անկախութեան հռչակագրի, Յեղափոխութեան պահանջատիրութեան, Արցախի՝ Հայաստանի հետ վերամիաւորման կամ անկախանալու, հետ բերելու, Հայաստանի գոյութեան իմաստի, 29.800 քառ. քմ. տարածքի մասին:

Մեծ հաշուով՝ ի՞նչ են ասում ընդդիմախօսները: Ասում են, որ Հայաստանի գոյութեան իմաստը եղել է Արցախի հարցի սպասարկումը: Ստացում է՝ եթէ այդ հարցը ինչ-որ կերպ փակուում է, ուրեմն Հայաստանի գոյութիւնն այլեւս անիմաստ է: Իրականում բոլորն իմացել են, որ այդ հարցն անլուծելի է: Հետեւաբար պէտք է Հայաստանի առջեւ անիրագործելի նպատակ դրուէր, ռեսուրսներ վատնուէին մի ուղղութեամբ, որ տեղ արդիւնք չի լինելու, նպատակ, որը հաստատապէս ապահովելու էր մշտական կոնֆլիկտի առկայութիւն: Իսկ եթէ սրան էլ գումար ենք Անկախութեան հռչակագրի տեքստը՝ «պատմական արդարութեան վերականգնման» եւ Հայաստանի ու Լեւոնայի Ղարաբաղի վերամիաւորման մասին յիշատակումներով եւ 11-րդ դրոյ-

թով, ամբողջութեամբ կարելի է ասել, որ Հայաստանի համար ապահովել են մշտական կոնֆլիկտը, փակ սահմաններն ու աշխարհից անգամներով դանդաղ զարգացումը՝ հետեւաբար կախուածութիւնը որեւէ կեդրոնից, իսկ իրականում՝ Ռուսաստանից:

Եւ ասա ՀՀ Գերագոյն խորհրդի եւ Ազգային ժողովի նախկին պատգամաւոր, «Հայ ազգային կոնգրես» կուսակցութեան փոխնախագահ, Տէր-Պետրոսեանի թիմակից Արամ Մանուկեանը, անդրադառնալով ՀՀ Սահմանադրութիւնը փոխելու անհրաժեշտութեան մասին վարչապետի յայտարարութեանը, այն որակել է «ծայրայեղ այլանդակութիւն»: Է՞լ ինչ են ասում ընդդիմախօսները: Օրինակ՝ որ կառավարող ուժը փորձում է հային, հայաստանցուն համոզել, որ իր հայրենիքը այս 29.800 քառ. քմ. տարածքն է, որ փորձում են ստեղծել հայաստանցու տեսակ՝ հային փորձում են սարքել ՀՀ քաղաքացի՝ ինչ-որ 29.800 քառ. քմ. տարածքի վրայ:

Հետաքրքիր է, եթէ ընթերցողը չի մանար՝ ով է այս խօսքերի հեղինակը, չի մանար՝ այս խօսքերով մտքի հեղինակը գովում է իշխանութեանը, թէ՛ քննադատում, ինչպէ՞ս կը վերաբերուէր նրան, որ իշխանութիւնը փորձում է ստեղծել ՀՀ քաղաքացու տեսակ՝ 29.800 քառ. քմ. տարածքի վրայ, ով ունի իրաւունքներ, իրացնում է դրանք,

ուսի պարտականութիւններ, ընտրում է, ընտրուում, որոշումներ կայացնում եւ այլն:

Իսկ մտքի հեղինակը Շիրակի թեմի առաջնորդ Միքայէլ եպիսկոպոս Աջապահեանն է: Եկեղեցականն ասում է՝ «Հայրենիքը սահմանել, սահմանագծել ինչ-որ 29,8 հազ. քմ.-ի մէջ, սա մոլորութիւն է»: Այսինքն՝ ըստ Աջապահեանի, պէտք է Հայաստանը անորոշ լինի, չպէտք է յստակ սահմաններ ունենայ: Հարց է առաջանում՝ ո՞ւմ է դա ձեռնտու, որ Հայաստանը չունենայ սահմաններ, յստակ ամրագրումներ: Գուցէ, եթէ Հայաստանը լինէր գերտէրութիւն, տարածաշրջանում եւ աշխարհում ամենաուժեղն ու անպարտելին, տեղին կը լինէր այսպէս մտածել: Այն էլ եթէ խաղաղ կեանքին սովոր չես, ուզում ես նուաճել ամէնքին ու ամէն ինչ: Բայց ակնյայտօրէն ոչ ամենաուժեղ ու ոչ ամենաշատ ռեսուրսներ ունեցող երկրի համար սահմաններ չունենալը միայն վտանգաւոր է, ու երազելով «գետնի վրայ»՝ նոր նուաճումներ չես կարող ունենալ. կորուստներ, վստահաբար, կ'ունենաս: Եւ պատմութեան ընթացքում մէկ անգամ չէ, որ մեզ հետ դա տեղի է ունեցել: Եւ այն էլ ոչ շատ հեռաւոր ժամանակներում:

«Մինչեւ 1890-ականները եկեղեցին պահել է իր պատմական տարածքներում: 1890 թվականին եկան, կուսակցութիւնները ստեղծ-

ուեցին, եկեղեցու դէմ արշաւ սկսեցին, որ եկեղեցին սխալ է, եկեղեցին ժողովրդին ստրկութեան մէջ է պահում: Ազատագրեցին: 29,8 հազար քառ. քմ. էր էր իրենց ազատագրածը: Այնինչ եկեղեցին 400 հազար քառ. քմ.-ի վրայ եւ աւելիով պահել էր հայ բնակչութեանը եւ հայ ազգաբնակչութեանը՝ միջին խաւար դարերում»: Ահա սա է Աջապահեանի պատկերացումները պետութեան մասին: Նրա համար կարեւոր է հայրենիքը, իսկ պետութիւն ունենալը երկրորդային է, ունենանք՝ լաւ, չէ՛ ոչինչ:

Այսինքն՝ ըստ նրա, 400 հազ. քառ. քմ. տարածքը, որտեղ ապրում են հայեր, բայց չունեն պետութիւն, աւելի նախընտրելի է, քան պետութեան գոյութիւնը: Այդ տրամաբանութեամբ հիմա էլ հայերը փոքր հայրենիք չունեն: Ի՞նչ վատ հայրենիք են Լոսը, Սոչին, Մոսկուան, Կրասնոդարն ու Ռոստովը, Փարիզը, Մոնաքոն, Լիոնը, Թեհրանը, Լիբանանն ու Սիրիան:

Աջապահեանը դժգոհում է, որ եկեղեցուն տրուած չէ գործունէութեան տարածք՝ մշակութային, կրթական, լուսաւորչական եւ դիւանագիտական գործունէութիւն անելու համար, ու ասում է. «Եթէ համակերպում ես 29,8-ի հետ, ուրեմն Միծեռնակաբերդը անիմաստ է, անիմաստ տեղ է զբաղեցնում, ուրեմն պէտք է ասես, որ չի

Շար.ը էջ 8

Հայ-Ֆրանսական «Ռազմավարական Մտերմութեան» Հանգուցային Օղակը

ՅԱՎՈՐ ԲԱՂԱՆԵԱՆ

Ֆրանսան ստանձնում է պաշտպանական յարաբերութիւններ եւ ռազմավարական մտերմութիւն Հայաստանի հետ, Հայաստանում բանակի օրուան նուիրուած հանդիսաւոր միջոցառման մասնակցութեան վերաբերեալ իր գրառման մէջ նշում է Հայաստանում Ֆրանսայի դեսպանը: Երկու օր առաջ Հայաստանն ու Վրաստանը ստորագրեցին ռազմավարական գործընկերութեան մասին հռչակագիր՝ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանի Վրաստան կատարած աշխատանքային այցի ընթացքում: «Մենք աւանդական, պատմականօրէն շատ հզօր դաշնակիցներ ենք, բարեկամներ, ոչ միայն հարեւաններ, ունենք շատ լաւ գործընկերութիւն, համագործակցում ենք բոլոր ուղղութիւններով:

Դէ ֆակտո մենք առանց այն էլ ռազմավարական ընկերներ էինք եւ ռազմավարական գործընկերներ: Այսօր արդէն կարելի է ասել, այս իրականութիւնը ձեւակերպուեց եւ այսօր պաշտօնապէս ստորագրեցինք ռազմավարական գործընկերութեան մասին համագործակցութեան համաձայնագիր», ստորագրման առնչութեամբ յայտարարել էր Վրաստանի վարչապետ Իրակլի Զարիբաշվիլին: Հայաստանի եւ Վրաստանի միջեւ ռազմավարական գործընկերութիւնը անշուշտ «բաղկացած» կարող է լինել մի շարք գործօններից, որոնց շարքում անշուշտ էական է հայ-ֆրանսական յարաբերութեան հանգամանքը: Երբ Ֆրանսայի դեսպանը յայտարարում է Հայաստանի հետ «ռազմավարա-

կան մտերմութեան» մասին, ապա այդ մտերմութիւնը չի կարող ամբողջականութիւն ստանալ առանց Վրաստանի հետ թէ՛ Ֆրանսայի, թէ՛ Հայաստանի ռազմավարական գործընկերութեամբ:

Այդ իմաստով, Հայաստան-Վրաստան ռազմավարական գործընկերութեան բովանդակութիւնն ու ամրութիւնը առնուազն ներկայիս շրջափոխում առաւել կարեւոր է, քան Ֆրանսայից հնչող յայտարարութիւնները եւ Ֆրանսայի հետ Հայաստանի յարաբերութեան մասին ձեւակերպումները: Իսկ հայ-վրացական ռազմավարական գործընկերութեան բովանդակութիւնը դեռեւս բաց հարց է, քանի որ գործընկերութիւնը անշուշտ ստորագրութեամբ չէ լոկ: Իհարկէ այն կարեւոր է որպէս մեկնակէտ, բայց ոչ ինչ է, եթէ չկայ յաջողիւ բովանդակութեան վերաբերեալ սկզբունքային եւ հայեցակարգային պատկերացումների ամբողջութիւն: Կա՞ր դա հայ-վրացական գործակցութեան պարագայում, թէ՞ ոչ: Այդ հարցը այսօր չունի պատասխան, որովհետեւ պատասխան չունեն մի շարք աւելի լայն նշանակութեան հարցեր, կապուած թէ՛ սեւեռական աւազանի, թէ՛ կովկասի եւ թէ՛ հենց Վրաստանի հեռանկարների հետ:

Իսկ այդ ընթացքում, Վրաստանի վարչապետ Իրակլի Զարիբաշվիլին յայտարարել է հրաժարականի մասին: Նրան փոխարինե-

լու է վրացական երազանք իշխող կուսակցութեան նախագահ Իրակլի Կոբախիձեն: Նրանք Ղարիբաշվիլիի հետ «փոխատեղում» են՝ ներկայիս վարչապետը կը գնայ կուսակցութեան ղեկավարի պաշտօնին: Կասկածից վեր է, որ, այդ փոխատեղման «կնքահայրն» է Բի-ձինա Իվանիշվիլին, որը նախորդ տարեվերջին յայտարարել էր մեծ քաղաքականութիւն վերադարձի մասին՝ վրացական երազանքի Պատուաւոր նախագահի կարգավիճակով: Նիկոլ Փաշինեանի Վրաստան կատարելիք այցից առաջ հրապարակուած մեկնաբանութիւնում հարցադրում էի արել, թէ արդեօ՞ք Փաշինեանն այնտեղ որեւէ ձեւով կը հաղորդակցուի ակտիւ քաղաքականութիւն վերադարձող Իվանիշվիլու հետ:

Վրաստանում վարչապետի հերթական փոփոխութիւնը ի՞նչ ազդեցութիւն կ'ունենայ Փաշինեան-Ղարիբաշվիլի ձեւաչափով եղած քննարկումների ու պայմանաւորութեանների հեռանկարի վրայ, եթէ դրանք իհարկէ պարունակել են բովանդակային առարկայականութիւն: Ղարիբաշվիլի-Կոբախիձէ փոխատեղումը ամենեւին լոկ ֆունկցիոնների կան փոխատեղում չէ, այն նշանակելու է Վրաստանի քաղաքական վարքագծում գուցէ թոյլ, «թաւշայ», սակայն որոշակի փոփոխութիւն: Դէպի ու՞ր: Դա է ինտրիգը:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

Հրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» անպայմանօրէն չի բաժնէր հոն արտայայտուող բոլոր տեսակետները



ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԴՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ
ԳՐԻԳՈՐ ԽՆՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՐԷ ԱԶԱՊԱՐԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
<http://www.massisweekly.com>

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ԼՈՒՐԵՐ

Հայաստանի Մեջ Զօրակոչի Ենթակայ Եղողներու Կետն Նուազը Կը Զօրակոչուի

Հայաստանի մէջ զօրակոչի ենթակայ երիտասարդներուն կէսէն քիչը կը զօրակոչուի բանակ, Զինուած Ուժերու կազմաւորման 32-րդ տարեդարձի տօնական միջոցառման ժամանակ յայտնեց վարչապետ Նիկոլ Փաշինեան: Ընդ որում՝ երկրին ղեկավարը միայն ենթադրութեան մակարդակով հնարաւոր երկու պատճառ նշեց. ըստ Փաշինեանի՝ կամ սերունդը առողջական ծանր խնդիրներ ունի, կամ ալ զօրակոչը Հայաստանի մէջ կը մնայ փտածութեան ամենածաղկուն միջավայրը, «ուր միմեանց հետ կը դաշնակցին բժշկական հանրութեան, գինուորականութեան եւ հանրութեան ներկայացուցիչներ»:

Ըստ Աժ Նախագահին՝ Պէտք Է Քննարկուի ՀՀ Օրինագի Եւ Զինանշանի Փոփոխութեան Հարցը

«Ինձ համար ակնյայտ է, որ Հայաստանի Հանրապետութեան օրհներգը վաղ թէ ուշ պէտք է փոխուի», թելեկրամի իր էջով գրած է Ազգային ժողովի նախագահ Ալէն Սիմոնեանը: Աժ խօսնակը ընդգծած է՝ այն պէտք է ըլլայ հայկական, կապ ունենայ մեր պետութեան ու հայկական երաժշտութեան հետ եւ ըլլայ օրհներգի կանոններուն համապատասխան:

դաշինքը կասկածի տակ է դնում մեր պետութեան գոյութեան իրաւունքը», յայտնեց պետութեան ղեկավարը: Ըստ Նիկոլ Փաշինեանի՝ այս հարցին մէջ սուր է իրաւապահ համակարգի արդիւնաւէտութեան հարցը: Վարչապետը համակարգային բարեփոխումներու անհրաժեշտութիւն կը տեսնէ. «Մենք պէտք է գնանք հաստատութեան կանխարեփոխումներ, վճռական որոշումներ ճանապարհով, որ տեղ չթողնենք կամ նուազագոյնի հասցնենք չարահաճումների հնարաւորութիւնը»:

Ամիսներ առաջ իշխանական պատգամաւոր Հայկ Սարգսեանը յայտնած էր, թէ ինը տարուան ընթացքին զօրակոչի կներու թիւը գրեթէ կիսով չափ կը ճատուած է, «այսինքն՝ 44 հազարէն դարձած է 24 հազար»:



Ազգային ժողովի նախագահ Ալէն Սիմոնեան

զինանշանը փոխելու օրինագիծ է ներկայացուած: Հայաստանի զինանշանը ընդունուած է Գերագոյն Խորհուրդին կողմէ 1992 թուականին, իսկ օրհներգը՝ 1991 թուականին՝ Առաջին Հանրապետութեան օրհներգի բնագրի չնչին փոփոխութիւններով (բառերը՝ Մի քայլ Նախադեման, երաժշտութիւնը՝ Բարսեղ Կանաչեան):

Քանի՞ Բռնի Տեղահանուած Արցախի Հեռացած Է Հայաստանէն

Fir.am-ը կը գրէ. Տեղեկատուական դաշտին մէջ պարբերաբար կը շրջանառուին Հայաստանը լքած՝ բռնի տեղահանուած արցախցիներու տարբեր թիւեր: 2023 թուականի Դեկտեմբերին ընկերային ցանցերու շարք մը օգտատէրեր ու կայքեր տարածեցին տեղեկութիւն, թէ ՀՀ-ն լքած արցախցիներու թիւը 25 հազար է: Իսկ աւելի վաղ ալ՝ Հոկտեմբերին, Արցախի նախկին պետական նախարար Արտակ Բեգլարեանը յայտնած էր Հայաստանէն հեռացած 10 հազար արցախցիներու մասին: Նշենք, որ ՀՀ Ներքին գործերու նախարարութեան Գաղթի եւ քաղաքացիութեան ծառայու-

թեան համաձայն 2024 թուականի Յունուարի դրութեամբ Լեռնային Ղարաբաղէն բռնի տեղահանուած է 115 հազար քաղաքացի: 2023 թուականի Սեպտեմբեր 19-էն մինչեւ 2024 թուականի Յունուար 16-ն ինկած ժամանակահատուածին ՀՀ պետական սահմանի օղակին ու ցամաքային անցման կէտերով երկրէն մեկնած է Լեռնային Ղարաբաղի հաշուառում ունեցող 12.203 անձ, որմէ 5770-ը վերադարձած է: Կը ստացուի, որ ընթացիկ տարուայ Յունուար 16-ի դրութեամբ ՀՀ-էն հեռացած եւ չվերադարձած՝ 12 հաշուառում ունեցողներու թիւը 6433 է:

ՀՀ-ն Չի Կրնար Թոյլ Տալ, Որ Օտար Մէկը Ամենավերջին Բառերով Հայիոյէ Հայ Ժողովուրդին Եւ Ղեկարարին. Յակոբեան

«Այն, ինչ թույլատրուած է մեր հեռարձակողներին, չի կարող թույլատրուել օտարներին»: Այս մասին մամուլի ասուլիսի ժամանակ յայտարարեց ՀՌ-Հ նախագահ Տիգրան Յակոբեանը՝ անդրադառնալով ամիսներ առաջ «Sputnik Ռատիօ»-ի եթերով հեռարձակուած հաղորդաշարին, որուն հետեւանքով վերջինիս գործունէութիւնը 30 օրով կասեցուած էր:

«Հայաստանը՝ որպէս ինքնիշխան պետութիւն, չի կարող թոյլ տալ, որ օտար ամբողջ նստած ունէ մէկը ամենավերջին բառերով հայհոյէ Հայաստանին, հայ ժողովուրդին եւ ՀՀ ղեկավարութեան: Կար օրէնքի խախտում՝ սպառնալիքներն ու բռնութեան կոչերը, եւ տեսնելով դա՛ մենք վարչական վարոյթ յարուցեցինք, եւ մեզ այլ պատիժ էր մնում, քան 30 օրով կասեցնել «Sputnik Ռատիօ»-ի հաղորդումները, որը հեռարձակում է «Տոսպա» ռատիօ-օրնկերութիւնը», ըսաւ ՀՌ-Հ նախագահ Տիգրան Յակոբեանը եւ յաւելեց. ««Տոսպա» ընկերութիւնը յստակ նշեց, որ կը դատապարտէ այդ բովանդակութիւնը եւ վարչական վարոյթ յարուցելու յաջորդ օրը եթերէն հանեց այն՝ Տիգրան Բէնոսյեանի հետ հաղորդումը: Նաեւ ՌԴ-էն պատուիրակութիւն եկաւ, եւ անոնք նոյնպէս ամսուսանք արտայայտեցին այդ բառաւէթերքին համար: Այսինքն՝ բոլոր հիմքերը ստեղծեցին, որպէսզի մենք 30 օր յետոյ վերականգնենք «Սպուտնիկ»-ի հաղորդումները եւ «Տոսպա»-ի վերահեռարձակման հնարաւորութիւնը»:



ՀՌՀ նախագահ Տիգրան Յակոբեան

աւելի կոշտ եղած է, քան արարքը. «Եւ ես իմ Ռուսաստանի գործընկերներին եւ «Տոսպա»-ի ղեկավարութեանը առաջարկեցի ընդամենը փոխարինել հայ ժողովուրդը՝ ռուս ժողովուրդով, փոխարինել մեր ղեկավարի անունը իրենցինով եւ Հայաստանը Ռուսաստանով եւ նոյն բովանդակութիւնը տարածել Մոսկուայում. դրանից յետոյ քանի՞ ժամ կ'ապրէր այդ ռատիօ կամ հեռուստաընկերութիւնը: Այսինքն՝ համարել կոշտ մեր վերաբերմունքը որեւէ հիմք չունի»:

Տիգրան Յակոբեանի խօսքով՝ ռուսական կողմին հետ պայմանաւորուած են որեւէ խախտման մասով արագ խնդիրը լուծել. «Համոզուած եմ, որ մօտ ապագայում այդպիսի բաներ չեն լինի, քանի որ ինձ հաւաստիացրել են՝ իրենց խմբագրական քաղաքականութեան մէջ բաւականին փոփոխութիւններ են մտցրել: Մոսկուայում հեռարձակողը՝ մեզ համար անընդունելի բովանդակութիւնը այլեւս ՀՀ-ում չի հեռարձակուի»:

Մշակոյթի Նախկին Նախարար Յասմիկ Պողոսեանի Գործը Հասած Է Դատարան

Մշակոյթի նախարարի պաշտօնը 10 տարի զբաղեցուցած, հետախուզման մէջ գտնուող Յասմիկ Պողոսեանի, անոր ամուսինին՝ Էտուարտ Յակոբեանի, որդիին՝ Ստեփան Յակոբեանի վերաբերեալ ՀՀ Դատախազութեան հայցադիմումը ՀՀ Հակափտածութեան քաղաքացիական դատարանը Յունուար 25-ին ընդունած է վարոյթ: Յասմիկ Պողոսեանը պաշտօնավարած է 2006-2016 թուականներուն, անոր նկատմամբ հանրային քրէական հետապնդում յարուցուած էր իր պաշտօնավարման օրօք կատարուած խարդախութեան առնչութեամբ:



Մշակոյթի նախկին նախարար՝ Յասմիկ Պողոսեան

Ըստ մեղադրական եզրակացութեան՝ ան, 2012-2016 թուականներուն զբաղեցնելով ՀՀ մշակոյթի նախարարի պաշտօնը եւ հանդիսանալով պետութեան անունով իրաւունք, պարտականութիւն կամ պատասխանատուութիւն չառաջացնող գործառնոյթներ իրականացնող պաշտօնատար անձ, իր ծառայողական լիազօրութիւնները ի վնաս պետական շահերուն օգտագործելով 300 քառակուսի մեթր մակերեսով հողամասը առանց ՀՀ կառավարութեան 26.07.2012թ. N

1052-Ա որոշմամբ սահմանուած պարտականութիւններու կատարման խարդախութեամբ յափշտակելուն, որուն հետեւանքով Հայաստանի Հանրապետութեան Հայփշտակուած է առանձնապէս խոշոր չափերով՝ 166.103.000 դրամ շուկայական արժէքով հողամասը: Այս գործով նախորդիւ քանի մը դատական նիստ նշանակուած է, որոնք չեն կայացած:

ԼՈՒՐԵՐ

Նիկոլ Փաշինեան Ու Քամալ Խարազի Քննարկած Են Հարաւային Կովկասի Անվտանգութեան Շուրջ Հարցերը



Նիկոլ Փաշինեան կ'ընդունի Իրանի Խորհրդակալ Քամալ Խարազիին

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեան ընդունած է Իրանի Իսլամական Հանրապետութեան Գերագոյն առաջնորդի խորհրդակալ, արտաքին յարաբերութիւններու ռազմավարական խորհուրդի ղեկավար Քամալ Խարազիին:

Վարչապետը կարեւորած է Խարազիի այցը Հայաստան եւ վստահութիւն յայտնած, որ այն նոր ազդակ կը հաղորդէ Հայաստան-Իրան յարաբերութիւններու հետագայ զարգացման ու ամրապնդման: Նիկոլ Փաշինեան նշած է, որ ԻԻՀ նախագահի հետ պայմանաւորուած են հետեւողական քայլեր ձեռնարկել առեւտրաշրջանառութեան ծաւալներու շարունակական աւելացման ուղղութեամբ: Միաժամանակ, վարչապետը նշած է, որ ջերմութեամբ կը յիշէ ԻԻՀ գերագոյն առաջնորդի հետ հանդիպումը եւ խնդրած է անոր փոխանցել իր ջերմ ողջոյնները:

Զրուցակիցները քննարկած են Հայաստան-Իրան համագործակցութեան օրակարգին առնչուող տարբեր հարցերը, որոնք կը վերաբերին քաղաքական, տնտեսական կապերուն, ուժանիւթի, ենթակառուցուածքներու եւ այլ ոլորտներու մէջ փոխգործակցութեան եւ համատեղ նախագիծերու իրականացման:

Միտքեր փոխանակուած են Հարաւային Կովկասի անվտանգութեան ու կայունութեան առնչուող հարցերու շուրջ:

Տարածաշրջանի ենթակառուցուածքներու ապաշրջափակման կապակցութեամբ վարչապետը կարեւոր նկատած է ԻԻՀ դրական դիրքորոշումը ՀՀ կառավարութեան կողմէ մշակուած «Խաղաղութեան խաչմերուկ» ծրագրի եւ այդ ծրագրի հիմք հանդիսացող առանցքային սկզբունքներու վերաբերեալ:

Պաքուն Խարդախութիւն Համարած Ե Փաշինեանի` Զյարծակելու Մասին Պայմանագիր Ստորագրելու Առաջարկը

Պաքուն Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանի Ատրպէյճանի հետ սպառազինութիւններու վերահսկման փոխադարձ մեխանիզմ մտցնելու եւ չչարձակման պայմանագիր կնքելու առաջարկը կը համարէ քաղաքական շահարկում եւ կը կարծէ, որ այդ ուղղուած է խաղաղութեան պայմանագրի նախագիծին վրայ աշխատանքէն ուշադրութիւնը շեղելուն: Այս մասին տեղական լրատուամիջոցներուն ըսած է Ատրպէյճանի ԱԳՆ մամուլի քարտուղար Ալիսան Հաճիգատէն:

«Հայաստանի վարչապետին յայտարարութիւնը նպատակ ունի շեղել ուշադրութիւնը Ատրպէյճանի եւ Հայաստանի միջեւ խաղաղութեան մասին երկկողմ համաձայնագրի նախագիծի մշակման եւ միջպետական յարաբերութիւններու կառուցման գործընթացէն», ըսած է ԱԳՆ պաշտօնական ներկայացուցիչը:

Անոր խօսքով, չնայած ատրպէյճանական կողմի բազում կոչերուն` վերջ դնելու Ատրպէյճանի տարած քային ամբողջականութեան

եւ ինքնիշխանութեան հետ կապուած պահանջներուն, հայկական կողմը տակաւին որեւէ գործնական քայլ չէ ձեռնարկած այդ ուղղութեամբ: «Այս առումով Հայաստանի առաջարկները, որոնք գործնական նշանակութիւն չունին, տարակուսելի են եւ անընդունելի», ընդգծած է Հաճիգատէն:

Ան նաեւ կը կարծէ, որ Փաշինեանի յայտարարութիւնները` խաղաղ գործընթացին իր հաւատարմութեան մասին, քաղաքական մանրիւրանքներ են` հաշուի առնելով, որ Հայաստանը կը վարէ ռազմականացման լուրջ քաղաքականութիւն, վերջին տարիներուն ստորագրած է գէնք գնելու միլիարդաւոր տոլարներու նախագիծեր եւ կը զարգացնէ ռազմական արդիւնաբերութիւնը:

«Ատրպէյճանը իր հերթին պիտի շարունակէ խաղաղութեան հաստատման իր ջանքերը եւ Հայաստանէն համարժէք քայլեր կ'ակնկալէ ոչ թէ խօսքով, այլ` գործով», եզրափակած է Ատրպէյճանի ԱԳՆ մամուլի քարտուղարը:

Հայաստանը Բարելաւած Ե Դիրքերը «Թրանսփարէնսի Ինթերնեշնլի» Փտածութեան Մասին Զեկոյցին Մէջ



«Թրանսփարէնսի Ինթերնեշնլի» միջազգային հեղինակաւոր կազմակերպութիւնը հրատարակած է փտածութեան ընկալման մասին իր այս տարուան զեկոյց-դասակարգումը: Հայաստանը մէկ միաւորով բարելաւած է իր դիրքերը:

Վաստակելով 47 միաւոր` նախորդ տարուան համեմատ Հայաստանը բարելաւած է իր ցուցանիշը մէկ միաւորով փտածութեան ընկալման համաթիւին մէջ` նշուած է «Թրանսփարէնսի Ինթերնեշնլի» միջազգային հեղինակաւոր կազմակերպութեան լոյս տեսած եւ 2023 թուականին վերաբերող զեկոյցին մէջ:

Ըստ կազմակերպութեան, «2018 թուականի Թաւշեայ չեղափոխութեան յաջորդած երկու տարիներուն Հայաստանը ժողովրդավարական եւ հակափտածութեան զգալի բարեփոխումներ իրականացուցած է: Այնուամենայնիւ, փտածութեան դէմ պայքարին մէջ յաւանքներ չկան իրականացնելու սահմանափակ իրականացման պատճառով: Հայաստանը (ինչպէս տարածաշրջանի բազմաթիւ այլ երկիրներ) կը բախի անվտանգութեան լուրջ սպառնալիքներու, սակայն ունի ներուժ` յաղթահարելու այդ մարտահրաշխանքները եւ անցնելու փտածութեան արդիւնաւէտ վերահսկման»:

«Թրանսփարէնսի Ինթերնեշնլի» փտածութեան ընկալման 2023 թուականի համաթիւին մէջ դասակարգուած են 180 պետութիւններ եւ տարածքներ, ուր 0 միաւորը «բացարձակապէս

փտած» վիճակն է, իսկ 100-ը` «փտածութենէ զուրկ» միջավայրը:

Ըստ զեկոյցին` համաշխարհային միջին միաւորը արդէն տասներկու տարիէ կը մնայ անփոփոխ` 43, եւ պետութիւններու երկու երրորդին մօտ միաւորներուն քանակը 50-էն ցած է, որ «կը նշանակէ, թէ փտածութիւնը այդ պետութիւններուն մէջ կը հանդիսանայ լուրջ հիմնախնդիր»:

Հրապարակման համաձայն, ութ երկիրներ յաջողած են բարելաւել իրենց դիրքերը` Իրլանտան (77 միաւոր), Հարաւային Քորէան (63 միաւոր), Հայաստանը (47 միաւոր), Վիետնամը (41 միաւոր), Մալտիվները (39 միաւոր), Մոլտովան (42 միաւոր), Անկոլան (33 միաւոր) եւ Ուզպեքիստանը (33 միաւոր):

Զեկոյցին համաձայն, Միացեալ Նահանգներու մէջ (69 միաւոր) Գերագոյն դատարանի բարոյագիտութեան թոյլ կանոնները յառաջ քաշած են դատական անաշուտութեան հետ կապուած լուրջ հարցեր: Սակայն «Թրանսփարէնսի Ինթերնեշնլի» կարծիքով, ԱՄՆ դաշնային եւ նահանգային դատական համակարգերը, հիմնականին մէջ, կը շարունակեն գործել համապատասխան անկախութեամբ` զերծ մնալով գործադիր եւ օրէնսդիր մարմիններու միջամտութենէն, իսկ ԱՄՆ նախկին նախագահին եւ ներկայիս նախագահին որդիին դէմ դատական գործերը կ'ընթանան «համապատասխան եւ անկախ դատական խողովակներով»:

ՊԵԿ-ը Հրապարակած Ե 1000 Խոշոր Հարկ Վճարողներու Ցանկը

Պ Ե տ ա կ ա ն Եկամուտներու Կոմիտէն կը յայտնէ, որ ՊԵԿ պաշտօնական կայքին մէջ հրատարակուած է 2023 թ. Յունուար-Դեկտեմբեր ամիսներու ընթացքին առաջին 1000 խոշոր հարկ վճարողներու կողմէ վճարուած հարկերու եւ վճարներու վերաբերեալ տեղեկատուութիւնը:



1000 խոշոր հարկ վճարողներու կողմէ 2023 թ. Յունուար-Դեկտեմբեր ամիսներու ընթացքին պետական պիւտճէ ընդհանուր առմամբ վճարուած է աւելի քան 1 թրիլիոն 710 միլիարդ 577 միլիոն

դրամ: Հարկային մարմին կատարուած վճարումներուն գումարը կազմած է աւելի քան 1 թրիլիոն 308 միլիարդ 983 միլիոն դրամ, իսկ մաքսային մարմին կատարուած վճարումներուն գումարը` շուրջ 401 միլիարդ 594 միլիոն դրամ:

Հայաստանն Ու Վրաստանը Ռազմավարական Գործընկերության Մասին Հռչակագիր Ստորագրած Են



Հայաստանի եւ Վրաստանի վարչապետներուն հանդիպումը Թիֆլիսի մէջ

Հայաստանի եւ Վրաստանի միջեւ ստորագրուած է ռազմավարական գործընկերութիւն հաստատելու մասին համատեղ հռչակագիր, Թիֆլիսի մէջ ամփոփելով աշխատանքային այցի արդիւնքները՝ յայտնեց վարչապետ Նիկոլ ֆաշինեան:

«Այս ձեռքբերումը մեր վերջին տարիների համատեղ ջանքերի եւ աշխատանքի արդիւնք է եւ արտացոլում է մեր ընդհանրութիւններն ու նպատակասլացութիւնը», նշեց ֆաշինեան:

Վարչապետը տեղեկացուց՝ իր վրացի գործընկերոջ հետ պայմանաւորուած են գործնական քայլեր ձեռնարկել միջպետական սահմանի սահմանազատման աշխատանքը աւարտին հասցնելու ուղղութեամբ:

Աւելի վաղ կայացած էր ֆաշինեան-Ղարիպաշվիլի առանձնագրոցը:

Վարչապետ Նիկոլ ֆաշինեան աշխատանքային այցով Վրաստան մեկնած է՝ մասնակցելու երկու երկիրներու տնտեսական համագործակցութեան միջկառավարական յանձնաժողովի հերթական նիստին:

Հայաստանի վարչապետ Նի-

կոլ ֆաշինեան յոյս ունի, որ Ատրպէյճանի մէջ սպասուող ընտրութիւններէն յետոյ հայ-ատրպէյճանական բանակցային գործընթացը լիարժէք ծաւալ կը ստանայ:

«Յոյսով եմ՝ Ատրպէյճանի նախագահական ընտրութիւններից յետոյ բանակցային գործընթացը լիարժէք ծաւալ կը ստանայ՝ արդէն իսկ համաձայնեցում եւ հանրայն սկզբունքների հիման վրայ խաղաղութեան պայմանագրի լրամշակումն աւարտին հասցնելու համար», յայտնած է ՀՀ վարչապետը Թիֆլիսի մէջ Վրաստանի վարչապետ Իրաքլի Ղարիպաշվիլի հետ բանակցութիւններէն յետոյ կայացած ճեպագրոցին ընթացքին:

«Գործընկերոջ տեղեկացրել եմ նաեւ Ատրպէյճանի հետ յարաբերութիւնների կարգաւորման ուղղութեամբ Հայաստանի կառավարութեան կողմից գործադրուող ջանքերի մասին: Ընդգծուել է, որ ռազմաշունչ եւ առաւելապաշտական հետտորաբանութիւնը չի նպաստում կարգաւորման գործընթացին», յաւելած է Նիկոլ ֆաշինեան:

Գերմանիան Մեղադրանք Առաջադրած Ե Պաքուի Կողմէ Կաշառուած Երոպացի Չորս Պատգամաւորները Նկատմամբ

Գերմանիոյ դատախազութիւնը կաշառակերութեան եւ փտածութեան համարչորս անձի, այդ շարքին՝ երկու նախկին պատգամաւորներու, որոնք կը կասկածուին Ատրպէյճանէն կաշառք ստանալու մէջ, որուն դիմաց Եւրոպայի Խորհուրդին մէջ անոնք քուէարկած են յօգուտ Պաքուի: Այս մասին յայտնած է կազմակերպուած յանցաւորութեան եւ փտածութեան հետազոտութեան հարցերով կեդրոնը (OCCRP):

Աքսել Ֆիշերը եւ Էտուարտ Լինթները եղած են ԵՆԽՎ անդամներ եւ ներգրաւուած եղած են, այսպէս կոչուած, «ատրպէյճանական մեկալվացքատան մէջ»: Ատրպէյճանը օգտագործած է, այսպէս կոչուած, «խաւիարային դիւանագիտութիւնը» եւրոպական քաղաքականութեան վրայ ազդելու համար:

Պաքուն օգտագործած է 2,9 միլիարդ ԱՄՆ տոլարի չափով գաղտնի հիմնադրամ, որպէսզի, ի թիւս այլ բաներու, եւրոպացի պատգա-

մաւորներուն առաջարկէ անվճար ուղեւորութիւններ եւ թանկարժէք նուէրներ, որոնք, օրինակ, պիտի քուէարկէին Պաքուի օգտին եւ «պիտի գարդարէին» ԵՆԽՎ-ի մարդու իրաւունքներու վերաբերեալ զեկոյցները այն ժամանակ, երբ երկիրը տասնեակ քաղաքական բանտարկեալներ կը պահէր բանտերուն մէջ:

Միւնիխի դատախազութիւնը հետաքննութիւն կ'անցընէ Ատրպէյճանի խորհրդարանի նախկին պատգամաւոր Էլչան Սուլէյմանովի նկատմամբ: Ան կը ղեկավարէր Պաքուի մէջ գործող ոչ-կառավարական կազմակերպութիւնը, որուն միջոցով իրականացուած են վճարումները, եւ, ինչպէս կ'ենթադրուի, ան հաւաքագրած է Ֆիշերը: Կ'ենթադրուի, որ Ֆիշերը կաշառքի դիմաց քուէարկած է Ատրպէյճանի օգտին, օրինակ՝ Ղարաբաղի մէջ Ատրպէյճանի եւ Հայաստանի միջեւ պատերազմի հարցով քուէարկութեան:

Հետաքննութեան ընթացքին

Fitch-ը Հայաստանի Ռուսաստանէն Տնտեսական Կախուածութիւնը Աշխարհաքաղաքական Վտանգ Կը Համարէ

Ամենահեղինակաւոր վարկանիշային կազմակերպութիւններէն մէկը՝ Fitch-ը, յառաջիկային հասկանալի փոփոխութիւններ չի կանխատեսեր. Հայաստանը մեծ կախուածութիւն ունի Ռուսաստանէն, կ'արձանագրէ գործակալութիւնը:

Չնայած Երեւանի ու Մոսկուայի միջեւ քաղաքական լարուածութեան՝ փոխադարձ առեւտուրը նորանոր մրցանիշեր կ'արձանագրէ: 2023-ի առաջին տասը ամիսներուն երկիրներու առեւտրաշրջանութիւնը անցած է 5 միլիարդ տոլարի սահմանը:

Վարկունակութեան գնահատումներ իրականացնող Fitch-ը Ռուսաստանէն այսչափ մեծ տնտեսական կախուածութիւնը Հայաստանի համար աշխարհաքաղաքական վտանգ կը համարէ:

«Մեր ամենախոշոր առեւտրային գործընկերը դեռեւս Ռուսաստանն է, չնայած իր մասնաբաժինն ընդհանուր առեւտրաշրջանութեան մէջ մի փոքր նուազել է: Երկրորդը՝ Արաբական Միացեալ Էմիրութիւնները, Չինաստանը, Վրաստանը, Ամերիկայի Միացեալ Նահանգները, որ առաջին անգամն է այս ցուցակում», ըսաւ տնտեսութեան նախարար Վահան:

Հայաստան Ապահով Երկիրներու Մէջ Առաջատար Դիրքի Վրայ Է

Numbeo հետազոտական փորձալի կողմէ հրապարակուած է աշխարհի երկիրներու ապահովութեան վարկանիշային աղիւսակը, համաձայն որուն՝ 2024-ին Հայաստանը զբաղեցուցած է 7-րդ հորիզոնականը՝ 78.4 միւլտիպլ: Նախորդ տարուան համեմատ դիրքային փոփոխութիւն չէ արձանագրուած, սակայն արձանագրուած է 0.4 միւլտիպլ բարելաւում:

2024-ին անվտանգութեան վարկանիշային աղիւսակին մէջ ներառուած են ընդհանուր առմամբ 146 երկիր: Առաջատար եռեակին մէջ են Անտորրան (87.1 միւլտիպլ), ԱՄԷ-ն (84.2 միւլտիպլ) եւ Քաթարը (84 միւլտիպլ):

Նկատենք, որ Հայաստանը անվտանգութեան վարկանիշային աղիւսակին մէջ առաջատար հորիզոնականին վրայ է ինչպէս տարածաշրջանի, այնպէս ալ ԵԱՏՄ երկիրներու շարքին:


Տարածաշրջանի երկիրներէն Վրաստանը 19-րդ հորիզոնականին վրայ է՝ 73.9 միւլտիպլով, որուն կը յաջորդեն Ատրպէյճանը՝ 33-րդ հորիզոնական՝ 68.5 միւլտիպլով, այնուհետեւ Թուրքիան՝ 53-րդ հորիզոնական՝ 59.1 միւլտիպլով: Տարածաշրջանի երկիրներու շարքին ամենացած՝ 90-րդ հորիզոնականը, զբաղեցուցած է Իրանը՝ 50.5 միւլտիպլով:

ԵԱՏՄ երկիրներէն Ռուսաստանը 51-րդն է (60.8 միւլտիպլ), որուն կը յաջորդեն Ղազախստանը՝ 72-րդ (54.1 միւլտիպլ), այնուհետեւ Պելաուսիան՝ 94-րդ (49 միւլտիպլ):

Ռատիկանութիւնը Գերմանիոյ մէջ խուզարկած է անշարժ գոյքի մօտ 20 առարկան, այդ շարքին՝ Գերմանիոյ խորհրդարանի (Պունտեսթակ) անդամներուն գրասենեակները: Անոնք արձակած են շուրջ 15 եւրոպական հետաքննական կար-



Քերոբեան: «Հիմնական նպատակը լինելու է, որպէսզի Հայաստանից արտահանուեն բարձր չափանիշերի եւ որակի ապրանքներ, որոնք կարող են պահանջարկ ունենալ աշխարհի բազմաթիւ երկրներում եւ ոչ թէ ինչ-որ փոքր երկրների շրջանակում: Մեր աշխատանքը, որը նաեւ տնտեսական քաղաքականութիւնում է հաստատուած, լինելու է այդ ուղղութեամբ հիմնական վրայ ջանքերը կեդրոնացնելուց տեղափոխուելու ենք ընդհանուր առմամբ խորը բազմազանեցման ուղղութեամբ կատարուող աշխատանքներին», նշեց նախարարը:



Armenia, the Caucasus country between Asia and Europe, has a safety index of 78.0. Despite the political and social issues, Armenia is reasonably safe for tourists.

Եւ Ղրղզիստանը 106-րդ (46.1 միւլտիպլ) հորիզոնական:

Numbeo հետազոտական փորձալի կողմէ հրապարակուած է նաեւ 2024-ին քաղաքներու անվտանգութեան վարկանիշային աղիւսակը, որուն մէջ Երեւանը զբաղեցուցած է 11-րդ հորիզոնականը՝ 78.2 միւլտիպլով: Նշենք, որ 2023-ին աղիւսակին մէջ Երեւանը 14-րդ հորիզոնականին վրայ էր՝ 78.1 միւլտիպլով: 2024-ին նախորդ տարուան համեմատ արձանագրուած է ինչպէս հորիզոնականի, այնպէս ալ միւլտիպլներու բարելաւում:

Ըստ քաղաքներու ասպահովութեան ցուցանիշի՝ Հայաստանը (Երեւան) եւս առաջատար է ինչպէս տարածաշրջանի, այնպէս ալ ԵԱՏՄ երկիրներու շարքին:

գաղութիւններ կամ փոխադարձ իրաւական օգնութեան մասին դիմումներն այնպիսի երկիրներու, ինչպիսիք են՝ Կիպրոսը, Լիխթենշթէյնը, Պելճիքան, Էսթոնիան, Լատվիան, Ատրպէյճանը, Չուիցերիան եւ Թուրքիան:

Բացառիկ եւ Շքեղ Հանդիսութեամբ Նշուեցաւ Գաբրիէլ Մոլոյեանի Ծննդեան 90 եւ Հասարակական Գործունէութեան 70-Ամեակը

Շարունակուած էջ 1-էն

եկած էին մասնակցելու Գ. Մոլոյեանի նուիրուած յորբեկեական սոյն հանդիսութեան:

Բեմին զոյգ կողմերուն վրայ գետեղուած հեռուստապատուհներու միջոցաւ ներկաները դիտեցին յորբեկար Գ. Մոլոյեանի կեանքի տարբեր շրջանները դրսեւորող դրուագներու հետաքրքրական լուսապատկերները:

Ողջունի եւ գնահատանքի ելոյթներով իրենց շնորհաւորութիւնները յայտնեցին երեսփոխան Քրիս Հոլտըն, գոնկրեսական ձիւտի Չու եւ Գ. Մոլոյեանի վաստակն արժեւորող պաշտօնական գնահատագիրներ յանձնեցին մեծարեալին: Գ. Մոլոյեանի օգտաշատ ներդրումն ու հանրօգուտ ծառայութիւնները գնահատող ելոյթով մը հանդէս եկաւ նաեւ Փաստատիրանչի Քաղաքապետ՝ Վիգոր Կորտոնը, որ քաղաքը խորհրդանշող զարդակոծակը՝ իր լամբակէն հանելով յորբեկարի լամբակին վրայ գետեղեց:



նով ելոյթ ունեցաւ իրաւաբան Գրիգոր Մոլոյեան: Ան իր հօր մասին արտայայտուելով թուեց անոր բարեմասնութիւնները, որով իր նուիրումը գերադաս շահերէն վեր նկատած է, դառնալով միասնութեան ռահվիրայ եւ գաղափարախօսութեան առաջնորդ: Պատմեց նաեւ կարգ մը դրուագներ իր հօր կեանքէն եւ յորդորեց ըլլալ լաւատես ու համեստ ու որդեգրել «Հայկականը՝ պատուական է» լուզուզը...:

Գեղարուեստական կոկիկ յայտագիր մը գործադրուեցաւ: Մախասեանի «Թէ չես եղել Հայաստանում» բանաստեղծութեամբ հանդէս եկաւ շնորհալի ասմունքող Անի Մարսէլեան: Իսկ գաղութի ծանօթ շնորհալի երգչուհիներէն՝ Սիւզի Մազմանեան, իր սօփրանօ ձայնով երգեց «Անոր»ը (Հ. Պէրպէրեանի) եւ «Հայաստան»ը (Արտեմիս Ալվազեան) ընկերակցութեամբ ստեղնաշարի վրայ՝ Դոկտ. Իգապէլ Գայաթեանի:

ՍԴՀԿ Կեդրոնական Վարչութեան ատենապետ՝ Տոքթ. Համբիկ Սարաֆեան դրուատեց օրուան յորբեկար Գ. Մոլոյեանի նկարագրանքին գիծերը, որպէս նուիրեալ անձ, համեստ եւ գործելաձեւի մէջ՝ «Սրբազան խենթ» մը: Քանի որ այն ինչ որ ըրած է եզակի է: Իր կարեւոր յատկանիշներէն են նաեւ փափկանկատութիւնն ու ուղղամտութիւնը եւ նաեւ մշտարթուն կերպով կառչած մնալը իր



Խօսք առնելով «Մասիս»ի լամբակիր՝ Գրիգոր Խոտանեան ծանրացաւ Գ. Մոլոյեանի կենսագրութեան գլխաւոր գիծերուն վրայ, որպէս ուսուցիչ, մշակութային գործիչ եւ լամբակրական աշխատանքներ հմուտ լրագրող եւ տիտղոսներ չի փնտռող կուսակցական ու հասարակական նուիրեալ գործիչ: Յիշեց նաեւ իր կողակիցին՝ Մարիալի կողմէ ցուցաբերուած զօրակցութիւնն ու խրախուսանքը ամուսինին համայնքային աշխատանքներուն հանդէպ:

Նոր Սերունդ Մշակութային Միութեան երկարամեայ ատենապետ՝ Յարութ Տէր Դաւիթեան հետաքրքրական դրուագներով համեմեց իր ելոյթը: Շեշտեց յորբեկար Գ. Մոլոյեանի աշխատասիրութիւնն ու ծառայասիրութիւնը որպէս «Կարգ կանոնի մարդ», որ միշտ կը միտի յաջողութեամբ պսակել իր ստանձնած գործը: Իր մօտ շօշափելի է «առողջ միտք առողջ մարմնի մէջ» սկզբունքը եւ եզրակացուց «ես ալ կ'ուզեմ Գաբրիէլ Մոլոյեանի պէս ըլլալ»...: Պէտք է միշտ մտածել եւ ըսել թէ՛ «ես որքանով կրնամ արժեւորել իմ կեանքը»...:



սկզբունքներուն վրայ: Ան ամէնուրեք իր ներկայութեամբ եւ գործունէութեամբ հարստացուց իր միջավայրը:

Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան, պերճիմաստ ոճով մը վեր հանեց յորբեկար Գ. Մոլոյեանի բարեմաս-



նութիւնները: Անցնող քսան տարիներու ընթացքին գրեթէ բոլոր ձեռնարկներուն հետեւելով, իր մէջ նկատած է մշտարթուն ախտասիրութիւն եւ նուիրուածութիւն իր ազգային, եկեղեցական բեղուն գործունէութեամբ, շարունակաբար սերունդներուն սիրցնելով հոգեւոր եւ ազգային արժանիքները: «Խոնարհաբար Դուք ճարտարապետող անձը եղաք թէ եկեղեցիին մէջ եւ թէ հասարակութեան մէջ, Հայրենիքի սէրը վառ պահելով Ձեր մէջ»:

Յորբեկար Գաբրիէլ Մոլոյեան եզրափակիչ խօսքով եւ լուզուած շեշտերով իր խորին շնորհակալութիւնները յայտնեց սոյն ձեռնարկի կազմակերպիչ ՍԴՀԿ վարիչ Մարմնին եւ գործակից կառույցներուն («Մասիս» շաբաթաթերթ, Նոր Սերունդ Մշակութային Միութիւն եւ ՀԿԲՄ), որոնք իրենց դրական մասնակցութիւնը բերին երեկոյթի յաջողութեան համար: Մասնաւոր

շնորհակալութիւն յայտնեց առաջնորդ Յովնան Արք.ին եւ ՍԴՀԿ Կեդրոնական Վարչութեան ատենապետ՝ Տոքթ. Համբիկ Սարաֆեանին, պաշտօնական հիւր անձնաւորութիւններուն եւ յայտագրի մասնակիցներուն: Ան ցաւ յայտնեց գաղութներու մէջ մարդու ճիւղի նահանջին եւ կոչ ուղեց հայ ծնողներուն եւ կազմակերպութիւններուն առաւել եւս զարկ տալ հայապահպանութեան եւ կառչած մնալ մեր արմատներուն եւ ազգային ինքնուրոյնութեան պահպանումին:

Յայտագրի առաջին մասնաւորութեան 90-ամեակի կարկանդակի հատումով: Ապա տօնական գուարթ մթնոլորտի մէջ գեղահանչիւն նուագի տիրապետութեան ներքեւ, տեղի ունեցաւ ճոխ հիւրասիրութիւն, ստեղծելով բարձր տրամադրութիւն եւ ոգեւորիչ ընկերային պահեր: Հանդիսականները իրենց շնորհաւորութիւնները փոխանցեցին յորբեկար Գաբրիէլ Մոլոյեան-

Բացառիկ եւ Շքեղ Հանդիսութեամբ Նշուեցաւ Գաբրիէլ Մուլոյեանի Ծննդեան 90 եւ Հասարակական Գործունէութեան 70-Ամեակը



նին, մաղթեով քառաջողջ եւ բեղմնաւոր տարիներ: Ուշ երեկոյին ներկաները բաւական երկար մնացին սրահին մէջ եւ ապա լաւագոյն տպաւորութիւններով մեկնեցան յի-

շարժան տօնակատրուիթենէն:
Ինքնատիպ երեկոյթ մըն էր, որու համար կ'արժէ շնորհաւորել նախաձեռնողներն ու կազմակերպիչները:

Photos by FAF Production
George Avetisyan - Marita Mgebrishvili

Հայաստանն Ու ԱՄԷ-ն Պայմանաւորուած Են Խորացնել Հետագայ Գործակցութիւնը՝ Արեւային Ուժանիւթի Արտադրութեան Ոլորտին Մէջ



Նախարար վահան Քերրեան Հայաստանի մէջ Արաբական Միացեալ Էմիրութիւններու դեսպան Նարիման Ալ-Մուլլայի եւ Մաստար ընկերութեան՝ Հայաստանի մէջ իրականացուող նախագիծերու համակարգող Մոհամմատ Ալ Շեհիի հետ պայմանաւորուած է խորացնել հետագայ գործակցութիւնը՝ արեւային ուժանիւթի արտադրութեան ոլորտին մէջ:

Հայաստանի եւ ԱՄԷ-ի միջեւ առեւտրաշրջանառութեան ծաւալը 2023-ին հասած է 2,8 միլիարդ

տոլարի, ինչ որ էմիրութիւնները կը դարձնէ Հայաստանի երկրորդ խոշորագոյն առեւտրային գործընկերը:

Մինչեւ 2023-ի Սեպտեմբերի վերջը ԱՄԷ-էն ներդրումներու հոսքը կազմած է շուրջ 135.235,1 միլիոն դրամ, որմէ ուղղակի համախառն հոսքերը՝ 105.192 միլիոն դրամ: Հայաստանի եւ Արաբական Միացեալ Էմիրութիւններու միջեւ գործարար եւ միջպետական գործակցութիւնը կը շարունակէ ընդլայնուիլ:

Ռազմարդիւնաբերութեան Ոլորտի Յառաջընթացը Նախարարութեան Գործունէութեան Առաջնահերթութիւններէն Է

ՀՀ բարձր արհեստագիտական արդիւնաբերութեան նախարար Մխիթար Հայրապետեանը երկրորդ հանդիպումը ունեցած է ռազմարդու ռեսուրսներու ընկերութիւններու ներկայացուցիչներուն հետ:



Նախարարը ընդգծած է, որ ռազմարդիւնաբերութեան ոլորտի զարգացումն ու յառաջընթացը նախարարութեան գործունէութեան առաջնահերթութիւններէն է, կան մարտահրաւէրներ ու խնդիրներ, որոնք պէտք է յաղթահարուին համատեղ ուժերով:

Բարձր արհեստագիտական արդիւնաբերութեան նախարարութեան կը տեղեկացնեն, որ Մխիթար Հայրապետեանը լսած է, թէ ինչ ակնկալիքներ ունին ռազմարդիւնաբերութեան ոլորտի ընկերութիւնները նախարարութեան, ինչ խնդիրներ ու առաջարկներ ունին, նաեւ ինչ մեխանիզմներու կիրառմամբ կը պատկերացնեն ոլորտի զարգացման խթանումն ու յառաջնորդումը:

Հանդիպման ընթացքին քննարկուած են ներկայացուած խնդիրներու յաղթահարման շարք մը հնարաւորութիւններ:

Ռազմարդիւնաբերութեան ոլորտի զարգացման գործին մէջ առանձնակի կարեւորուած է ճարտարապետական կրթութեան ուղղութեամբ նոր ծրագրերու մշակման անհրաժեշտութիւնը, որակեալ անձնակազմի պատրաստումն

ու սերնդափոխութեան ապահովումը:

Հայաստանը Կ'երթայ Ժամանակակից

Շարունակուած էջ 1-էն

Թիւն ունենայ Հայաստանի որեւէ տարածքի նկատմամբ: Մենք պատրաստ ենք տալ նման երաշխիքներ, երկարատեւ եւ անշրջելի երաշխիքներ, բայց նոյնպիսի երաշխիքներ ակնկալուած ենք ուրիշներէն»:

«Զօրքերի հայելային ետքաշուծը հնարաւորութիւն կու տայ, որ Ատրպէյջանական ԽՍՀ բոլոր տարածքները լինեն Ատրպէյջանի, իսկ Հայկական ԽՍՀ բոլոր տարածքները Հայաստանի վերահսկողութեան ներքոյ», իր ելոյթին մէջ ըսած է վարչապետ

Փաշինեան՝ շարունակելով, «Մենք նաեւ սահմանի սահանագատում, այսինքն՝ ապառազմականացում ենք առաջարկել Ատրպէյջանին: Նաեւ սպառազինութիւնների փոխադարձ վերահսկման մեխանիզմ, նաեւ չյարձակման մասին պայմանագրի ստորագրում, եթէ կը պարզուի, որ խաղաղութեան պայմանագրի ստորագրումը սպասուածից աւելի երկար ժամանակ է պահանջուած»:

Հայաստանը հաւատարիմ է խաղաղութեան օրակարգին եւ պիտի չընդունի այդ օրակարգին, իր խօսքին մէջ նշած է վարչապետ Նիկոլ Փաշինեան:

Ընդդիմութեան Քարոզը

Շարունակուած էջ 2-էն

եղել ցեղասպանութիւն: Մի թիզ հող հետ վերադարձրել է թուրքիան, ներողութիւն խնդրել է»:

Այսինքն՝ նրա կարծիքով՝ պէտք է թուրքիային տարածքային պահանջներ ներկայացնել: Եւ տեսնես ո՞վ է շահելու դրանից: Թուրքիան վախի՞ց, թէ՞ խղճահարութիւնից դրդուած է կատարելու այդ պահանջը: Իսկ գուցէ ա՞յլ քայլերի գնաց: Ահա այս խելքով էլ Աջապահեանը դիւանագիտական դաշտում գործելու տարածք է ուզում: 168.am-ի եթերում էլ Աջապահեանը, անդրադառնալով Հայոց պատմութիւն առարկայի 7-րդ դասարանի դասագրքին եւ պատասխանելով հաղորդավար Սաթիկ Սէյրանեանի այն հարցին, թէ իշխանութիւնները ի՞նչ խնդիր են լուծում պատմութեան այս դասագրքերով, ասում է.

Աջապահեան.- Ստեղծում են հայաստանցու տեսակ:

Սէյրանեան.- Ինչպիսի՞ տեսակ:

Աջապահեան.- Հայաստանի պետութեան քաղաքացի, հեշ կապ չունի ազգային պետութեան հետ:

Սէյրանեան.- Այսինքն կապ չունի՞ հայ ես, հայ չես:

Աջապահեան.- Ոչ մի կապ չունի, կարելոք Հայաստանի քաղաքացի ես:

Սէյրանեան.- Բնակիչ:

Աջապահեան.- Բնակիչ ես, քաղաքացի ես, ունես իրաւունքներ, ունես պարտականութիւններ, հարկերդ մուծում ես, իրաւունքներից օգտուում ես, քուէդ տալիս ես: Ինչ որ կրթութեան նախարարն էր, չէ՞, ասել, որ, այո՛, պէտք է ՀՀ-ն բազմազգ պետութիւն լինի, որտեղ բոլորը պէտք է խօսեն հայերէն: Ուրեմն սա հայի նոր տեսակն է:

Այսինքն՝ Աջապահեանը դէմ է հայաստանցու այն կերպարին, որը իրեն համարում է ՀՀ քաղաքացի, ունի իրաւունքներ, իրացնում է իր իրաւունքները, պարտականութիւնները, քուէարկում է, որոշում է կայացնում:

Ըստ նրա՝ մեզ պէտք է ոչ թէ հայաստանցու, այլ հայի կերպար, որի համար չկայ չստակ պետութիւն, իր սահմանով, օրէնքներով, քաղաքացու իրաւունքներով ու պարտաւորութիւններով: Ըստ նրա՝ մեզ պէտք է էթնիկ հայ, ով ժամանակաւորապէս ապրում է այս տարածքում, բայց հաւակնում է աւելի մեծ տարածքի, ու բնաւ կապ չունի՝ այդ տարածքում կ'ունենա՞յ պետութիւն, թէ՞ ոչ: Աւելի նախընտրելի է, որ հայերը վերադառնան իրենց պատմական՝ 400 հազար քառ. քմ. տարածքով հայրենիք՝ թէկուզ առանց պետականութեան:

«ՄիվիՔ»
Յապաւումներով

Հովանաւորութեամբ՝
Ս. Դ. ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Փետրուար 24

Կազմակերպութեամբ՝
Ս. Դ. Հ. Կ. ԱՐԵՒՄՏԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՎԱՐԻՉ ՄԱՐՄԻՆԻ

ՄԵԾԱՐԱՆՔԻ
ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

Տեղի կ'ունենայ՝
Շաբաթ 24 Փետրուար, 2024 ին
երեկոյեան ժամը 7:30-ին

Ժողովրդային և հայրենասիրական երգերով կը մասնակցին՝

ԴԱԻԹ ՍԱՄՈՒԷԼԵԱՆ
և
ՀԱՐՈՒԹ ՀԱԿՈԲՅԱՆ

Փաստիկայի Հ.Կ.Բ.Մ. Կեդրոնէն ներս
1060 North Allen Avenue
Pasadena, CA 91104

Սուտքի Նուէր՝ 100 Տոլար

ՏՈՄՏԵՐՈՒ ՀԱՄԱՐ ՀԵՌՈՒՄՆԵՆԵԼ
Կարիսէլին 626•755•4773
Քնարին 626•491•7899

Massis Weekly

Volume 44, No. 4

Saturday, February 3, 2024

Having a Strong and Combat-Ready Army is the Sovereign Right of Armenia: PM Pashinyan



YEREVAN -- Armenian Prime Minister Nikol Pashinyan said that "Armenia has offered demilitarization to Azerbaijan."

"We have also offered a mutual arms control mechanism, also the signing of a non-aggression pact if it turns out that signing a peace treaty will take longer than expected," Nikol Pashinyan said at the festive event dedicated to the 32nd anniversary of the formation of the Armenian Army.

He noted that "the ideas rooted in

us about safety and security systems and their operational formulas turned to be disastrous for us."

"There is no other option for the Republic of Armenia than the diversification of security relations. And we're going that way. We are on the path of acquiring new and modern weapons and equipment, and in recent years the Government has signed contracts for the purchase of several billion USD

Continued on page 3

Armenia and Georgia Sign Declaration Establishing Strategic Partnership



TBILISI— Prime Minister Nikol Pashinyan and his Georgian counterpart Irakli Gharibashvili signed a joint declaration calling for "strategic partnership" between their countries as they held talks in Tbilisi on Friday.

The declaration was signed during Pashinyan's working visit to Georgia.

"Today's achievement is the outcome of our joint efforts and work over the past several years reflecting our commonality and our goals. This achievement once again emphasizes the need to multiply our efforts and not to limit ourselves to what we have achieved," Pashinyan said following the meeting of the Armenian-Georgian commission on economic cooperation

in Georgian capital Tbilisi.

"De facto, we were already strategic partners and friends," Gharibashvili told at the joint news briefing. "It can be said that this reality was formalized today."

"This achievement is the result of several years of joint work and reflects our commonalities and intentions," Pashinyan said for his part.

The Armenian premier listed more than a dozen areas where Armenia and Georgia will strive for closer ties. Defense and security was not among them.

The declaration was signed at the end of a session of a Georgian-Arme-

Continued on page 4



Announcement by Three National Political Parties

The Western U.S. leadership of the Social Democratic Hunchakian Party, the Armenian Revolutionary Federation and the Armenian Democratic League (Ramgavar Party) met on Monday, January 22, 2024 at the latter's offices. During the two-hour meeting, the parties discussed the situation related to Artsakh Armenians and issues related to our local community. Each party delegation was headed by its chairperson: Vazken Khodanian from the Hunchakian party; Avo Kechichian from the ARF; and Tamar Poladian-Perron from the Ramgavar party.

Սկզբից ասենք, որ Առնօ Բաբաջանեանի բոլոր երգերը ներծծուած են հայկական ժողովրդական երաժշտութեան հնչեղանքներով, մի երեւոյթով, որը գալիս է նրա ուսուցիչ Խաչատուրեանից: Եթէ նա ժողովրդական, աշուղական երաժշտութիւնը օգտագործում էր գոր-

ծիքային երաժշտութեան մէջ, Բաբաջանեանն անուամ էր հակառակը: Նա երգեր յօրինելիս էր օգտուում ժողովրդական երաժշտութիւնից: 30 տարեկան հասակում ստեղծելով «Հերոսական Բալլադ» կոթողային ստեղծագործութիւնը, կոմպոզիտորը նոյն ժամանակ յօրինեց «Հայկական Ռապսոդիա» դաշնամուրային փայլուն, շենչող մի գործ, որի մէջ յարութիւն առաւ հին երեւանցիների ամէնասիրած «Այ բաղմանչի, բաղմանչի...» (Այգեպան, - ՀԵՆ. Ա.) երգի քնքոյզ մեղեդին, որին յաջորդում է փոթորկոտ, հայկական ժողովրդական պարին բնորոշ խառն ռիթմով պարը:

Բաբաջանեանի յաջորդ դաշնամուրային գործերն են «Էլեգիա»-ն ու «Նոկտուրն»-ը: Առաջին պիեսում հնարամտօրէն, երկակի մեղեդային ընթացքով փառաւոր տեսք է ստացել Սայաթ Նովայի «Քանի վուր ջան իմ» երգը, որը, ինչպէս ասում են՝ լսես՝ հա լսելդ կը գայ...: Յիշեցնեմ, որ «Էլեգիա»-ն կոմպոզիտորը նուիրել է Արամ Խաչատուրեանի յիշատակին: Բաբաջանեանի «Նոկտուրն»-ը կոթողային գործ կարելի է համարել: Այն չափազանց տարածուած է նաեւ երգի տեսքով: Այս առնչութեամբ հետաքրքիր է հետեւեալ փաստը:

Բաբաջանեանի կեանքի մայրամուտին, մեծանուն երգիչ Իոսիֆ Կոբզոնը խնդրում է կոմպոզիտորին երգի վերածել «Նոկտուրն»-ի սքանչելի մեղեդին՝ իր երգացանկում ընդգրկելու համար, սակայն Բաբաջանեանը մերժում է եւ ասում. - Իմ մահից յետոյ, խնդրեմ, ինչ որ ուզէք՝ կարող էք անել: Կոմպոզիտորի մահից յետոյ «Նոկտուրն»-ը վեր է ածուել երգի եւ դարձել Կոբզոնի երգացանկի ամէնատարածուած երգերից մէկը:

Անցեալ դարի 70-ականներին սկսած Բաբաջանեանի համար շարժուն ասպարէզ դարձաւ հատրադային երաժշտութիւնը: Նրա այդ ժանրի երգերը դարձան պահանջ ողջ սովետական երկրում: Բոլոր երգիչների համար, օրուայ հացի պէս անհրաժեշտութիւն դարձաւ նրա երգերը կատարելը:

Առնօ Բաբաջանեանը համաշխարհային հռչակի արժանացաւ հիմնականում իր հատրադային, տարածուն երգերով: Այդ ժանրի առումով նրան կարելի է համարել նախկին Խորհրդային ողջ տարածքի եւ Եւրոպական նախկին դեմոկրատական երկրների ամէնասիրուած երգահանը, աւելին՝ այդ ժանրի ԱՍՏՈՒԱՄԸ:

Բաբաջանեանը մեծապէս նպաստել է հայկական հատրադային երգի զարգացմանն ու առաջընթացին: Այսօր էլ բազմաթիւ հայ եւ օտար (հիմնականում ռուս) հանրայայտ աստղեր են կատարում Բաբաջանեանի հրապուրիչ, շոյիչ, երբեմն էլ առնական, պարային ռիթմերով հարուստ երգերը:

Բաբաջանեանը Հայաստանի եւ Ռուսաստանի ամէնասիրուած ու հեղինակաւոր երգաստեղծն է (նոր բառ է, ուշադիր, - ՀԵՆ. Ա.):

Յիշենք նրա «Երեւան», «Առաջին սիրոյ երգը» եւ «Երե-

ւանի սիրուն աղջիկ» երգերը՝ ծանօթ կինոնկարից: Ըստ որում, մինչեւ օրս էլ շատերին թւում է թէ վերջինը ժողովրդական երգ է: Նոյնն է պարագան «Հարսնացուն Հիւսիսից» ֆիլմի ավարտին հնչող ռուսական ժողովրդական երգի վերաբերեալ: Սրտմաշ, հոգեթով, գողտրիկ, փայլուն կատարմամբ ռուսական ժողովրդականացած այդ երգը Բաբաջանեանի գլուխ-գործոցներից մէկն է:

Յիշենք նաեւ Բաբաջանեանի ամէնատարածուն երգերից մի քանիսը.

«Գեղեցկութեան թագուհի», «Ժպտա», «Մի շտապիր», «Շնորհակալ եմ քեզ», «Եղիւր ինձ հետ», «Կանչիր ինձ», «Հարսանիք» եւ այլն:

Կոմպոզիտորը երաժշտութիւն է գրել բազմաթիւ հայկական ֆիլմերի համար, որոնցից երկուսը՝ «Հարսնացուն Հիւսիսից» եւ «Երջանկութեան մեխանիկա» ժապավէնների երաժշտութիւնը Բաբաջանեանը յօրինել է իր կեանքի վերջալոյսին՝ տուրք տալով մտերիմ բարեկամ, տաղանդաւոր բեմադրիչ Ներսէս Յովհաննիսեանի խնդրանքին: Այս երկու ֆիլմերն էլ մեծ ժողովրդականութիւն են վայելում հայ աշխարհում եւ հաճախ են ցուցադրուում հայկական եւ ռուսական հեռուստատեսութեամբ:

Առնօ Բաբաջանեանի միակ երգչախմբային գործը «Ազգ փառասան» խմբերգն է, որը վեր է ածուել մի տեսակ հիմներգի (նոր բառ է, ուշադիր, - ՀԵՆ. Ա.): Այս խմբերգի առաջին մասում կենդանութիւն է առել սրտմաշուկ Գիքորին կենդանացնող «Տիրապանիկա չուխայ չուխի, հանդ է գնում ոտաբաց» հոգեթով երգի մեղեդին:

Հիմնականում բնակուելով Մոսկուայում, կոմպոզիտորը մտքով, հոգով, ամբողջ էութեամբ շնչում էր Հայաստանով, ապրում նրա առօրեայով: Որպէս մարդ հաղորդական էր, անմիջական, ընկեր էր բոլորի հետ: Բնութիւնից ունենալով խոշոր քիթ, երբեք քիթը բարձր չէր պահում ոչ մէկի առջեւ:

Լաւ է ասել Առնօ Բաբաջանեանը. «Երաժշտութիւնը պէտք է հուզի քեզ, ցնցի, մտնի սիրտդ եւ ոչ թէ զարմացնի»:

Այս յօդուածն աւարտելու պահին յայտնի դարձաւ, որ Ռուսաստանի իշխանութիւնները որոշել են Առնօ Բաբաջանեանի ծննդեան 100-ամեակի կապակցութեամբ, 2021 թուականը դարձնել Բաբաջանեանական Երաժշտութեան Տարի: Առաջին ձեռնարկը տեղի է ունեցել Յունուարի 22-ին, որի ծրագրում հնչել են կոմպոզիտորի բացառապէս նուագախմբային գործերը: Ամբողջ տարուայ ընթացքին Ռուսաստանի բոլոր խոշոր քաղաքներում լաւագոյնս կ'արժեւորուի մեր հայրենակից, ՄԵՄ ՀԱՅ Առնօ Բաբաջանեանի հիասքանչ երաժշտութիւնը: Բաբաջանեանական Երաժշտութեան Տարուայ վերջին ակորդը կը հնչի տարուայ աւարտին՝ Մոսկուայի նշանաւոր կրեմլեան վեց հազար նստատեղով համերգային սրահում:

Ձեր Ծանուցումները Վստահեցեք
«Մասիս» Շաբաթաթերթին
Massis2@earthlink.net (626) 797-7680

Ջապել Եսայեան (1878 - 1943)՝ Վիպական Սեռի Ռահվիրաներն Եւ Բեղուն Գրչի Գեղարուեստագետը

ՅԱԿՈՐ ՏԻՆԵԱՅԵԱՆ

4 Փետրուարը ծննդեան օրն է Ջապել Եսայեանի ծննդն էր 1878 թ. փետրուարի 4-ին Երևանի Մարտիրոսի թաղում (այժմ Երևանի կենտրոնում)։ Ջապել Եսայեանի (Ջապել Յովհաննէսեան՝ աղջկուհի) մականունով, Կ. Պոլիս, Սկիւտար, 4 Փետրուար 1878 - 1943)։

Արդի գրականութեան պատմութիւնը, արդարեւ Ոսկեդար որակումը տուած է այն ժամանակահատուածին (1900-1915), որուն սպասարկուները հիւսեցին մեր ցեղին իմացականութեան ամէնէն հզօր ու վճիտ սարսուռները։ Սպասարկուներ, որոնք իրենց թողած գրական հարուստ ժառանգութեան բոլոր սեռերով ու գործովը իրենց բարձրարուեստ ճաշակին, գեղագէտի հմտութեամբ, իրաւամբ կոչուեցան Գեղարուեստ-Արուեստագէտ սերունդի ներկայացուցիչներ, որոնց ծիրանափառ արեւը ցաւօք հանգեցաւ 1915-ի Հայոց Յեղասպանութեան տարտարոսին մէջ՝ գանակաւ գանակ անոնք նուիրաբերելէ յետոյ իրենց գեղարուեստական երկերը, նուաճելով գրաբարեաններու եւ ռոմանթիքներու (Հ. Ղեւոնդ Ալիշան, Թովմաս Թերզեան, Մատթէոս Մամուրեան, Սրբուհի Տիւսաբ եւ ուրիշներ) նօսրացած ճակատն ու անոնց միապաղաղ սենթիմենթը լիզմը։

Համիտեան կոտորածներու տարիներու (1894-1896) հետեւանքով հայ մտաւորականութեան գրեթէ պարպուած Պոլիսը 1900-ի սկիզբներէն ա՛լ գիշեր էր իր երբեմնի փառքը Եւրոպային, որուն ոստաններուն մէջ թափառախոնջ մեր գրողներուն, - Ա. Արփիարեան, Գր. Զօհրապ, Ե. Օտեան, Լ. Բաշալեան, Երուստան, Ա. Չօպանեան, Ռ. Զարդարեան, Վ. Թէքէեան, Զ. Եսայեան, Յ. Օշական, Սիւսանիս եւ ուրիշներ, - հոգեխառնութեանց խորունկ ջուրերը մինչեւ ծնունդ տուին ազգայնականութեան ջիղն ու կրակը՝ առաջնորդող շունչ ու ոգի բերելու Մեսրոպեան գիրին, Հայու արիւնովն ու Հողին սերովը շաղախուած, որ մեր հինաւուրց արժէքները, Երազը, կարօտանքը, Յոյսը, թախիծը, խոհերն ու զգացումները պիտի վերածէին վերանորոգ կեանքի։

Հոգեմտաւոր այս ընդհանուր ճաշակէն նախ ծնունդ առած քաջակորով Սիւսանի (Ջապել Նաննեան, ապա Ջապել Ասատուր) «Ազգանուէր Հայուհեաց Ընկերութիւն»-ին պիտի յաջորդէր միւս քաջամարտիկին՝ Ջապել Յովհաննէսեան-Եսայեանի ապագայ «Սկիւտարի Տիկնանց Միութիւն»ը, որուն հայրենանուէր վիպագիրին ողջ կեանքը անցաւ երկու եղբուններու արեան ճապարհներու մէջէն, հուսկ իր շունչը փչելով 30-ականներու երկրորդ կէսէն ետք Խ. Հայաստանի մէջ անհատի պաշտամունքի տարիներու ականաւոր մտաւորականներու ղեմ եղբերական ճանապարհին...։ Ու ճաշակելով բանտախոցերու եւ աքսորավայրերու մէջ սարսափն ու դառնանքը սպանութիւններու եւ գնդակահարումներու, ի վերջոյ արնակոտակ այդ քառսին մէջ ինկաւ ցաւագին ճակատագիրը Ջապել Եսայեան մեծ վիպագիրին, ստալինեան Սիւսի իր ու մահակուլ աքսորավայրերու մէջ...։



1900-ի առաջին քանի մը տարիները գրական կեանքը արդէն ողջունէր էր Զօհրապի, Օտեանի, Չօպանեանի, Թէքէեանի, Սիւսանի-թոյլի, Սիւսիլի եւ սերնդակիցներու անդրանիկ դիւանները, որոնց չուշացաւ միանալ Ջապել Եսայեանի «Սպասման Սրահին Մէջ» խորագրեալ առաջին վէպը, 1903-ին։ Ի դէպ, Պոլսոյ մէջ ութ տարի առաջ՝ 1895-ին, իր ծննդավայրի թաղային Սկիւտարի Ս. Խաչ վարժարանը ան աւարտելէ ետք, Զօպանեանի «Ծաղիկ» կիսամսեային մէջ լոյս տեսնել էր անոր առաջին արձակ բանաստեղծութիւնը՝ «Երգ Առ Գիշեր» խորագրեալ եւ Զ. Յովհաննէսեան ստորագրութեամբ։ Այնուհետեւ հոգեբանական կառուցուածքի նմաներանգ արձակ պատկերներ Եսայեանէն՝ «Կոյրը», «Զխաբող Սէրը», «Անդամալոյծը Ծովեզերքին» խորագիրներով, շուտով ուշադրութեան արժանի պիտի դարձնէին անդրանիկ խիզախումները անոր երկնատուր տաղանդին, զայն դասելու իրապաշտ սերունդի կրտսեր ներկայացուցիչներու շարքին։ Այսպէս է որ Եսայեան կոփեց իր գրական ուղին Պոլսոյ «Հայրենիք» օրաթերթին մէջ ալ՝ յիշեալ թուականէն սկսեալ։

Զորս տարեկանին, փոքրիկն Ջապել նախ գրաճանաչութեան համար կը դրուի մասնաւոր դպրոցի մը մէջ եւ 1888-ին կ'ընդունուի Սկիւտարի Ս. Խաչ վարժարանը։ 1892-ին աւարտելէ ետք վարժարանը, մէկ տարի կ'աշակերտէ Արշակ Չօպանեանին, որ նկատելով աշակերտուհիին գրական ընդունակութիւնները, կը խրախուսէ զայն՝ մէկ-երկու տարի ետք «Ծաղիկ»-ին մէջ հրատարակելով պատանուհիին անդրանիկ քանի մը բոմբիւնները։ Այնուհետեւ «Աղջկան Հոգիներ» ընդհանուր խորագիրի տակ, ապագայ վիպագիրը փորձեց իր գրական յոգեբեր արտայայտել դեռատի աղջկայ կերպարով։ Ապաքէն, պատմումի անկեղծ շեշտը, տրամադրութիւն ստեղծելու անմիջականութիւնն ու ակներեւ ձիւրքը իսկոյն ուշադրութեան արժանացուցին Ջապել Յովհաննէսեանը, որ 1895-ի վախճանէն առաջ խումբ մը մտաւորական երիտասարդներու հետ մեկնեցաւ Փարիզ, ուր որոշ ժամանակ մը մասնակցեցաւ Լուսինեանի բառարանը կազմելու աշխատանքին, եղաւ ունկնդիր Սորպոնի եւ Քոլէճ տը Ֆրանսի դասընթացներուն՝ նախընտրելով գրականութեան ու փիլիսոփայութեան ճիւղերը։

Փարիզի մէջ՝ դեռ Ջապել

Յովհաննէսեան, կը հմտանայ ֆրանսերէնի մէջ, անյազ յափշտակութեամբ կարդալով Պալլաքի, Զոլայի, Ֆլօպէրի, Մօփասանի, կին մեծանուն վիպագիր ժորժ Սանտի գործերը, կ'ոգեւորուի մանաւանդ վերհասնելով, կ'ուսումնասիրէ սէմպոլիստներն ու պառնասեանները (Շ. Պօտլէր, Է. Փօ, Լըքոնթ տը Լիլ, Սիլլի Փրիկուս, Պանվիլ եւ ուրիշներ)։ Առանձնակի բուռն հետաքրքրութիւն կը ցուցաբերէ դէպի ֆրանսական արձակ հոգեբանական ուղղութիւնը։ Կը ծաւալէ բեղուն գործունէութիւն՝ աշխատակցելով ֆրանսական եւ հայկական շարք մը պարբերականներու։ Այսպէս, 1897-1899 թուականներուն իր գրած «Աշուղը», «Կարմիր Զաղացը», «Եւրոպա», «Մահը», «Անձնասպան Տղաք» ստեղծագործութիւնները զինք կը դարձնեն հանրաճանաչ անուն եւ փնտռուած հեղինակ։ Մարդու հոգին, սիրտը, զգացումները՝ կեանքի, աշխարհի, շրջապատի, ժամանակի ու միջավայրի ամենանրբին առնչութիւններով, մարդը իր ներաշխարհով՝ ինքնիւր մէջ եւ հասարակական կապերու ոլորտէ ներս, ժողովուրդին ճակատագիրը պատմութեան հոլովոյթին ընդմէջէն, մարդոց ներկան ու ապագան, տառապանքներն ու մաքառումները, ապագայ մեծ գրողին վաղ շրջանի երկերուն նիւթն ու բովանդակութիւնը կ'ըլլան։

Մասնաւորապէս ուշադրաւ են իր «Եւրոպա» եւ «Աշուղը» կտորները։ Առաջինը՝ սիրոյ, զգացումներու ու ժիւրեպանային բանաստեղծականացման գեղեցիկ նմոյշ մըն է։ Երեւակայել, որ վրթանէս Փափագեան, 1910-ին Թիֆլիս հրատարակուած իր «Պատմութիւն Հայոց Գրականութեան» երկին մէջ Ջապել Եսայեանի «Աշուղը» ստեղծագործութիւնը համարէ «վիպասանուհու գլուխ-գործոցը», որ՝ ինչպէս ըսուեցաւ՝ գրուած է վիպասանուհիին շատ վաղ տարիքին։ Փափագեան նոյնիսկ կ'ընդգծէ. «Կա՞յ արդեօք սրանից շքեղ արեւելեան մի բանաստեղծութիւն, որ այսքան խոր վիշտ, համակող, վարակիչ թախիծ կրէ իր մէջ, այս աստիճան հրապուշտի հետ միասին...»։

Մնալով «Աշուղը» ստեղծագործութեան հետ, վիպասանուհին առիթով մը գրած է, թէ աշխատաւոր մարդուն «արեւահար դէմքը», «յուսահատ աչքերը», դեռ վաղ տարիներէ մտահոգած են զինք։ «Աշուղը»՝ որ գրողին առաջին փորձերէն մէկն է, հանդէս լուսարձակի տակ կը բերէ խոնարհ մարդու, շրջապատէն մերժուածներու եւ անտուն թափառականներու ցաւոտ հոգին։ Ու պիտի աւելցնել, որ գրողին այս ժանրի վաղ գործերը անոր նախասիրութիւններն էին, որ կարելի է համարել գեղարուեստական-հոգեբանական ուսումնասիրութիւններ։

1900-ին, Փարիզի մէջ 22-ամեայ Ջապել Յովհաննէսեան կ'ամուսնանայ Տիգրան Եսայեան անունով նկարիչի մը հետ, կը կապուի միտքի ու հոգիի ազատութեան խորհրդանիշ այդ քաղաքին, ուր լաւապէս տիրապետելով ֆրանսերէնի՝ կ'աշխատակցի ֆրանսատառ հեղինակաւոր թերթերու եւ հանդէսներու, ինչպէս՝ «Իւմանիթէ Նուվէլ»-ին, «Մերթիւր տը Ֆրանս»-ին եւ այլ թերթերու։

1902-ին Տէր եւ Տիկին Եսայեանները Փարիզէն կը վերադառնան Պոլիս։ Ինչպէս վերը նշեցինք,

Շար.ը էջ 19

Zulal:
AN A CAPPELLA TRIO TRANSFORMING VILLAGE FOLK MELODIES

THE UCI CENTER FOR ARMENIAN STUDIES PRESENTS ZULAL
FEATURING TENI APELIAN, ANAIS ALEXANDRA TEKERIAN, & YERAZ MARKARIAN

FRIDAY, FEBRUARY 16, 2024 8:00PM
WINIFRED SMITH HALL UC IRVINE
FREE ADMISSION

Zulal, which means "clear water," is an a cappella trio that transforms Armenia's village folk melodies into arrangements that pay tribute to the music's ancient roots while allowing it new possibilities. Zulal celebrates the trials and joys of old Armenian life, from the echoes of loss to the enduring vibrations of dance and celebration. The trio has performed in such esteemed venues as the Getty Museum, the MET, the Smithsonian Folklife Festival, the Berklee College of Music, and the Kennedy Center. Zulal has four critically acclaimed albums to its credit.

Parking is available at the Mesa Parking Structure. For information on how you can purchase advanced discounted parking, visit www.arts.uci.edu/arts-events-parking-permits.

UCI Armenian Studies ILLUMINATIONS

The event is organized by the UCI Center for Armenian Studies and co-sponsored by UCI Illuminations, School of Humanities, Department of History, Department of Music, Global Middle East Studies, Jordan Center for Persian Studies, OC Armenian Festival, OC Armenian Professional Society, UCI Armenian-American Alumni Chapter, and Armenian Students Association.

Քրիստոնեությունը և Ազգասիրությունը

ՎԵՐ. ԴՈԿՏ. ՎԱՐՍԱՆ Յ. ԹՈՒԹԻԿԵԱՆ

Կար ժամանակ մը մեր ազգային կեանքին մէջ երբ կարգ մը հայեր այն սխալ ըմբռնումը ունէին, թէ Քրիստոնէութիւնը եւ ազգասիրութիւնը մէկտեղ չեն գուրջանար, մէկը միւսը կը հակասէ: Գտնուեցան կարգ մը ազգայններ, որոնք կրօնքի եւ եկեղեցիի դէմ պայքար մղեցին: Միւս կողմէ, գտնուեցան կարգ մը հայ քրիստոնէաներ, որոնք պնդեցին, թէ Քրիստոնէութիւնը աղերս չունի ազգային հարցերու հետ: Անոնց տեսակէտը այն էր, որ Քրիստոնէութեան պաշտօնն է մարդոց հոգիները փրկել մեղքի կապանքներէն եւ գանոնք պատրաստել անդեմական կեանքին: Անոնց համոզումը շատ չէր տարբերէր հին եկեղեցական հայրերէն Տերտուլիանոսի աշխարհայեացքէն որ սովոր էր ըսելու. «Խնչ գործ ունի Քրիստոս Պղատոնի հետ կամ Երուսաղեմ Աթէնքի հետ»: Ներկայիս ալ այս մտայնութիւնը ունեցող շատ քրիստոնէաներ կան, որոնք կը հաւատան, թէ քրիստոնէայ մը միայն քրիստոնէական հարցերով հետաքրքրուելու է:

Վերոյիշեալ երկու ծայրայեղ մտայնութիւններն ալ սխալ են: Կրօնք եւ ազգ սիրարու հակառակորդ չեն, զիրար չեն հակասեր: Ընդհակառակը, ազգեր իրենց կրօնքներն ու կրօնական համոզումներն ունին: Մարդոց կեանքը միութիւն մըն է, անոնց կեանքը տարբեր դասակարգերու ներքեւ չի դրուիր: Այլ խօսքով, եթէ մէկը քրիստոնէայ է Քրիստոս իր կեանքին Տէրն է ամենուրեք, տան մէջ ինչպէս նաեւ գործի աշխարհին մէջ, իր անհատական ինչպէս նաեւ իր հաւաքական կեանքին մէջ, Կիրակի օր ինչպէս նաեւ շաբթուան եօթը օրերուն ալ: Թէեւ մարմին եւ հոգի իրարմէ կը տարբերին իրենց պաշտօնով, բայց ամբողջութիւնը մը կը կազմեն: Կարելի է հոգին անջատել մարմինէն, եթէ կեանքը պիտի շարունակուի:

նակուի: Ժողովուրդի մը կեանքն ալ ամբողջութիւն մըն է: Անոր կրօնքը անջատուած չէ իր հաւաքական կեանքէն:

Հասկնալու համար թէ ինչո՞ւ եւ ինչպէ՞ս եւ ո՞ր չափով քրիստոնէայ մը իր ազգին հարցերով զբաղելու է, հարկ է թերթատել Աստուածաշունչի էջերը եւ սերտել Ս. Գրական դէմքերու, մարգարէներու, առաքեալներու եւ սուրբերու կեանքը: Այդ տեսակ սերտողութիւնը մը յստակօրէն ցոյց կուտայ թէ ինչպէս անոնց կեանքերը անքակտելիօրէն կապուած են իրենց հաւաքական եւ ազգային կեանքին հետ: Օրինակի համար, երբ կը սերտենք Մովսէսի, Եսայիի, Երեմեայի, եւ Ամովսի կեանքերը, որոշապէս կը տեսնենք թէ անոնք ոչ միայն կրօնասէր, այլ նաեւ ազգասէր մարդիկ էին: Այսպէս, եթէ առնենք իշխալ մարգարէներու ամենէն ակնաւորը, Մովսէս մարգարէն, Եբրայական կրօնի ռահվիրան, այն եզրակացութեան կը հանգիստ, թէ Մովսէս ոչ միայն հաւատքի տիտան մըն էր, այլ նաեւ ճշմարիտ ազգասէր ու հայրենասէր մարդ մը, որուն սրտէն ոչ ոք կըրցաւ մարել ազգասիրութեան բոցավառ կայծը, ոչ Փառաւորներու շողջողուն գահը, ոչ ալ Եգիպտական արքունիքի ընծայած փառքն ու պատիւը: Մովսէս աւելի մեծ պատիւ ու պերճանք համարեց իր չարչարուած ժողովուրդին ծառայել քան թէ Փառաւորի մը գահաժառանգը ըլլալ:

Նմանապէս, եթէ սերտելու ըլլանք Նոր Ուխտի ամենէն կարկառուն դէմքերէն Պօղոս Առաքեալի կեանքը: Հոն կը տեսնենք թէ այս հաւատքի հերոսը՝ իր ազգին սիրով տոգորուած կը գրէ. «Եղբայրներ՝, սրտանց կը փափաքիմ ու կ'աղօթեմ Աստուծոյ որ, Իսրայէլը փրկէ» (Հռոմ. 10.1): Պօղոս յօժար էր իր ազգին համար նզովուիլ: Այսպէս կը գրէ ան. «Ես ինքս կը փափաքէի նզովուիլ Քրիստոսէն, մարմնի կողմէ իմ եղբայրներուս ու ազգականներուս» (Հռոմ. 9.3):

Գաղափար մը ունենալու համար, թէ կրօնասէր մարդ մը որչափ կրնայ սիրել իր ազգն ու հայրենիքը, հարկ է կարդալ 137-րդ Սաղմոսը, ուր հայրենաբաղձ Սաղմոսերգուն՝ հայրենիքի կարօտով տոչորած ի խորոց սրտի կը գոչէ՝. «Ով Երուսաղեմ, եթէ քեզ մոռնամ, թո՛ղ իմ աջ ձեռքս իր պաշտօնը մոռնայ. թող իմ լեզուս քիմքիս փակչի եթէ քեզ չյիշեմ» (Սաղմ. 137.5-6):

Կրօնք եւ ազգ գիրար չեն հակասեր, թշնամի չեն իրարու, այլ ընդհակառակը կրօնքը կը բարձրացնէ, կ'ազնուացնէ ազգի եւ հայրենիքի սէրը եւ կը մշակէ մարդուն մէջ անձնուրաց սիրոյ եւ անձնագոհութեան հոգի, որ մարդ մը կարենայ գոհուիլ իր ազգին եւ հայրենիքին համար: Կրօնքը կը մշակէ մարդուն մէջ ճշմարտութեան եւ իտէալի համար գոհողութեան ոգին, եւ ազգասիրութիւնը այն ազնուագոյն իտէալն է, որուն պէտք է նուիրուին ամէն անոնք որ կը սիրեն իրենց կրօնքն ու ազգը:

Ինչ կը վերաբերի հայ ժողովուրդին, որոշապէս Քրիստոնէութիւնը խիստ բախտորոշ դեր ունեցաւ մեր ազգային, քաղաքական, ընկերային, ընտանեկան եւ մշակութային կեանքին մէջ: Հայ Քրիստոնէութիւնը օժտեց հայ ազգը այբուբենով, իր լեզուն արտայայտելու ուրոյն նշանագիրներով, որ գորեղ միջոց մը հանդիսացաւ մեր ազգային գոյութիւնը մշտնջենաւորելու եւ զայն հաստատ վէմի վրայ դնելու:

Հայ եկեղեցին իբրեւ քրիստոնէական ընտիր դաստիարակութիւն ջամբող հաստատութիւն, դարեր շարունակ դարձաւ

հայ ժողովուրդի մէջ քրիստոնէայ նկարագիր կերտող ուժեղ ազգակ մը: Հայ եկեղեցին նաեւ եղաւ հզոր ազգակ մը հայ ազգին քաղաքական կեանքի ղեկավարման մէջ: Երբ պետութիւնը ունեցանք՝ ան գործեց պետութեան հետ ձեռք ձեռքի: Իսկ երբ մեր պետութիւնը կորսնցուցինք, ան ստանձնեց հայ ժողովուրդի հոգածութիւնը աշխարհի չորս ծագերուն:

Ես կը հաւատամ, թէ ամէն հայ աստուածային նախախնամական կարգադրութեամբ է, որ հայ ծնած է: Իր հայ ծնած ըլլալը պատահականութեան կամ արկածի արդիւնք չէ: Արդ, Աստուծոյ կամքն է որ ամէն մարդ իր ինքնութիւնը պահէ: Աստուծոյ կամքն է նաեւ, որ ամէն հայ իր ինքնութիւնը պահէ. Այսինքն, իր հայ ապրելով եւ իր հայ մնալով զԱստուած պաշտէ, Քրիստոսի եւ իր ազգին ծառայէ: Աստուածոյ կամքն է, որ իր ստեղծած արարածները հաւատարիմ ըլլան իրենց ազգին:

Ես կը հաւատամ, թէ ամէն հայ քրիստոնէայ իր անձնական ներաշխարհէն զատ ունենալու է նաեւ ազգային մտահոգութիւններու աշխարհ մը: Ամէն հայ ո՛ւր որ ապրի Արարատը ունենալու է իբրեւ իր անփոխարինելի փարոսը:

Ես կը հաւատամ, թէ ամէն հայ քրիստոնէայ պէտք է իրազեկ ըլլայ այն իրողութեան որ այս մոլորակի որեւէ երկնակամարի ներքեւ՝ ան կը պատկանի հայ ազգին եւ անբաժանելի մասնիկն է անոր: Գիտակից հայեր ուր որ ալ ապրին կապուած են իրարու հայրենիքով, մշակոյթով եւ ճակատագրով:

Ես կը հաւատամ, թէ հայ քրիստոնէային հաւատքն ու ազգասիրութիւնը երբեք չեն հակասեր իրարու, հապա միատեղ կը գործակցին եւ անոր կեանքը կ'ամբողջացնեն:

Լոյս Տեսած է

Շարունակուած էջ 14-էն

հայկական, այլեւ՝ Օսմանեան կայսրութեան տեղական կառույցներու կողմէ հաւաքագրուած եւ Հայաստանի նորանկախ հանրապետութիւնը զրկուած ծրարներ, դրամ, հագուստ, դեղ եւ այլն...

Յատկանշական այլ փաստ մը, որ կը պարզուի փաստաթուղթերէն. Իսթանպուլի օժտ Հայաստանի պատուիրակը հայաստանեան ծրագրերու մասին ծանուցած է նաեւ տեղույն հայկական թերթերուն միջոցով եւ մամուլն ալ, իր կարգին, մասնակից դարձած է այս գործին:

Բացի օգնութիւններուն վերաբերեալ փաստաթուղթերէն, կայ նաեւ այլ հարցերու վերաբերեալ գրադրութիւն, որ նոյնպէս ներառուած է գիրքին մէջ: Օսմանեան կայսրութեան մէջ Հայաստանի դիւանագիտական ներկայացուցիչ Ֆերտինանտ Թահթաճեանի փաստաթուղթերը յետագային պահուած են Պոլսոյ մէջ առաքելական պատուիրակին (Վատիկանի դիւանագիտական ներկայացուցիչին): Ահա այսպէս ալ անոնք յայտնուած են Վատիկանի գաղտնի արխիւներուն մէջ:

Փաստաթուղթերուն մէկ մասը օտարալեզու է եւ գնահատելի է Հ. Վահան Ծայրագոյն վարդապետ Օհանեանի ջանքը՝ օտարալեզու բնագիրներէն թարգմանել տալու, համադրելու եւ ներկայացնելու փաստաթուղթերը՝ իբրեւ հերթական վաւերական արժէք մեր պատմութեան: Այս մէկը Միւրթարեան միաբանութեան հայագետ անդամի առաջին գիրքը չէ: Ան նախորդ տարիներուն նոյնպէս հայոց պատմութեան վերաբերեալ եզակի աշխատութիւններ հրատարակած է եւ անցեալ տարի, Հայաստանի նախագահ Վահագն Խաչատուրեանի հրամանագրով հայագիտութեան զարգացման եւ հայապահպանութեան գործին մէջ ներդրած աւանդին համար պարգեւատրուած է «Մովսէս Խորենացի» շքանշանով՝ սփիւռքահայ մտաւորական Արա Քեթիպեանի հետ: Անոնք համատեղ հրատարակած են հատորաշար մը՝ ամերիկեան մամուլի մէջ հայոց ցեղասպանութեան արձագանգներուն մասին:

Սկսեալ Զոկտեմբեր 13, 2023-էն

Նկարչութեան Դասըթացք

Ամեն Ուրբաթ
5 PM - 6 PM

Ուսուցչուհի Ռիթա Շահինեան

Հասե՛ք
1060 ALLEN AVENUE PASADENA, CA 91104

Արձանագրութիւն

Սկսեալ Սեպտեմբեր 18

Չանգափառելի
+1(626) 681-9455

\$ 30 FEE / Month

Instagram.com/norserountlosangeles
facebook.com/norserountculturalassociation

Հայ Երիտասարդին Բարեսիրական Եզակի Արարքը



Բարեգործությունը անհատի մը կամ կազմակերպության մը կամաւոր ու անչահահանդիր նիւթական ու հոգեւոր օգնութեան կատարումն է, որուն նպատակն է աջակցիլ կարիքաւորներուն, որպէսզի կարողանան ապահովել իրենց նիւթական եւ հոգեւոր պահանջները, աջակցիլ անոնց առողջապահութեան պահպանութեան ու զարգացման, նիւթական օժանդակութիւն մատակարարել պատերազմի աղէտեակներուն, գաղթականներուն, նահատակներու հարազատներուն եւ վիրաւորներուն եւ օգտակար հանդիսանալ պատերազմին պատճառած հոգեկան վիճակներու վերացման ու բուժման, աշխատատեղիներու ստեղծման, աջակցելով գիտութեան, կրթութեան, արուեստի, գրականութեան, մարզական կեանքի եւ տարբեր այլ կենսական վերականգնման ծրագիրներու իրականացման: Վերջապէս բարեգործութիւն կը նշանակէ նաեւ աջակցիլ պատմական, ճարտարապետական, հոգեւոր ու մշակութային յուշարձաններու պահպանութեան, ապահովելով մարդասիրութեան ամբարանումն ու տարածումը, մարդկային արժանապատուութեան պահպանումը, սերունդներու համերաշխութեան ամբարանումն ու միասնականութիւնը: Արցախի կորուստէն ետք, երբ տասնեակ հազարաւոր հայեր բռնի փոխադրուեցան Հայաստան, Հայաստանի մեր ժողովուրդն ու Սփիւռքահայերը այս գիտակցութեամբ լծուեցան բարեսիրական ու մարդասիրական առաքելութեան:

Անցնող ամիսներու ընթացքին, աշխարհով մէկ հայութիւնը թեւ եւ թիկունք կանգնեցաւ իր պապենական հոգեւոր վտարանդի Արցախահայութեան եւ մեր հոգեւոր ու ազգային կառուցներուն աշխատանքային գլխաւոր օրակարգը հանդիսացաւ մեր հարազատ հայրենակիցներու օժանդակութեան հարցը: Ի տես Արցախի կորուստին եւ տասնեակ հազարաւոր Արցախահայերու դէպի Հայաստան բռնի գաղթին եւ կատարուած սարսափելի ոճիրներուն հեռաւոր ցամաքամասերէ ցնցուած, խոցուած ու վրդոված հայեր անտարբեր չմնացին եւ ամէն կերպ աջակցեցան եւ նիւթական օժանդակութիւն մատակարարեցին գաղթականներուն:

Երբ աւելի քան հարիւր քսան Արցախահայերու աքսորի եւ դէպի Հայաստան բռնի գաղթի ու սարսափելի արհաւիրքի մասին լուրը աշխարհով մէկ տարածուեցաւ, Կլէնտըլէն Արեգ Բոյնեան երիտասարդ մը, տակաւին 16 տարեկան պատանի, անմիջապէս, անձնական

նախաձեռնութեամբ գործի լծուեցաւ օգնութեան ձեռք երկարելու իր հայրենակիցներուն: Ան կազմակերպեց Արցախին նուիրուած երիտասարդական մասնաւոր միջոցառում մը, իր բարեկամները հրաւիրելով ինքնաշարժներու ցուցադրութեան (Car Show) Պըրպէնքի Առաջնորդարանի Սրբոց Ղեկնողեանց Մայր Տաճարի կառատան մէջ: Միայն երկու ժամուայ տեւողութեամբ եզակի միջոցառման մուտքի նուիրատուութիւններէն հաւաքուած գումարը հասաւ 8187 ամերիկեան տոլարի: Արեգի երազն ու նպատակն էր օգտակար հանդիսանալ Հայաստան հաստատուած իր քոյրերուն ու եղբայրներուն:

Անցնող օրերուն, Արեգ ընկերակցութեամբ իր մօր՝ Տօքթ. Թալար Թեղիբեանին այցելեց Հայոց Առաջնորդարան եւ հանդիպում մը ունեցաւ Ամերիկայի Միացեալ Նահանգներու Առաջնորդ՝ Գերշ. Տէր Յովնան Արք. Տէրտէրեանի հետ եւ անոր յանձնեց գումարը, որ պիտի փոխանցուի Հայաստան տեղափոխուած կարիքաւոր Արցախահայերուն:

Սրբազանը բարձր գնահատեց Արեգ Բոյնեանի սոյն արարքը՝ եզակի նախաձեռնութիւնը, որ իր անկեղծ սիրոյ ու ապրումներու դրսեւորումն էր հանդէպ հազարաւոր Արցախահայերուն, որոնք Արեգի եւ շատերու օժանդակութեան կարիքը ունին: Սրբազանը իր խօսքին մէջ գնահատեց Արեգի մարդասիրական օրինակելի ու եզակի արարքը, եւ ըսաւ, թէ՛ կարելորդ գումարին քանակը չէ, որքան բարի կամեցողութիւնն ու փափաքը ունենալը օգնելու մեր եղբայրներուն եւ քոյրերուն:

Հանդիպումին ներկայ եղաւ նաեւ Տէր Վազգէն Քահաճայ Մովսէսեանը, որ Արեգի արարքը համարեց հայ երիտասարդութեան վճռականութեան արտացոլացումը: Արեգ իր կարգին շնորհակալութիւն յայտնեց իր ծնողքին, բարեկամներուն եւ Սրբոց Ղեկնողեանց Մայր Տաճարի հոգեւոր հովիւին, ծխական խորհուրդին եւ երիտասարդական խումբին (AYCO):

Ընդօրինակելի ու եզակի արարք մը, հայու խիզախ կամքն ու վճռականութիւնը արտայայտող: Օրինակելի արարք մը գեղեցիկ՝ իր էութեան մէջ, որով «ես»-ը «մեր»-ի եւ «մենք»-ի իսկ նիւթը ոգիի կը փոխակերպուի:

Յայտնենք, որ Առաջնորդ Յովնան Արք. Տէրտէրեանի տնօրինութեամբ, Արեգ ընկերակցութեամբ իր մօր, պիտի մեկնի Հայաստան եւ օժանդակութիւնը անձնապէս փոխանցէ Արցախահայերուն:

Հայագիտութեան Սահմանումի

Շարունակուած էջ 13-էն

րապետութեան քաղաքացու ձեւաւորման ու դաստիարակութեան, հայրենի երկրի պաշտպանունակութիւնը բարձրացնելու, համագային խնդիրներում հայեցակարգային մօտեցումներ բանաձեւելու հարցերում:

Կարծում ենք, որ ներկայ փուլում Արցախի եւ Հայաստանի Հանրապետութեանց նկատմամբ վերջին տարիներին թուրքատրայէճանական տանդէմի թշնամական քաղաքականութեանը դիմակայելու եւ դրան հակադարձելու ուղին զարգացման ազգային մոդել ձեւաւորելու մէջ է, որի հիմքում դրուած են լինելու կրթական ազգային համակարգի զարգացումը, մատաղ սերնդի հայեցի դաստիարակութիւնը: Հայագիտութիւնը պետք է դառնայ պետութեան ազգային քաղաքական հայեցակարգի անբաժան մասը, նպատակաւորաբար Հայաստանի անկախ պետականութեան ամրապնդմանն ու հզօրացմանը, նպաստի հայոց ազգային գաղափարախօսութեան ձեւաւորմանը, հակահարուած տայ օտարների կողմից հայոց պատմութեան նենգափոխումներին: Նման խնդիրների կենսագործումն այժմէականութիւն է հաղորդում հայագիտութեանը, ճանապարհ հարթում նրա յետագայ զարգացման համար, այն վերածում ազգային անվտանգութեան ապահովման յուժկու ազդակի ու գործօնի:

Հայագիտութիւնն ազգային անվտանգութեան հզօր միջոցի վերածելու համար պահանջուած է լուծել բազմաթիւ հիմնարար եւ կիրառական խնդիրներ: Առաջին հերթին անհրաժեշտ է, որ այն դառնայ պետական յատուկ հոգածութեան առարկայ. նրա համար ստեղծուեն արդիւնաւէտ գործունէութեան պայմաններ, տրամադրուեն անհրաժեշտ ֆինանսական ու նիւթատեխնիկական միջոցներ:

Հայագիտութեան գլխաւոր կենտրոնը Հայաստանն է: Սակայն դեռ 19րդ դարից այն վերածուել էր միջազգային գիտութեան: Ներկայումս եւս Հայաստանի պատմութեան, հայոց լեզուի, հայ մշակույթի ուսումնասիրութեամբ զբաղուած են աշխարհի շատ երկրների մասնագէտներ: Տարբեր երկրներում գործում են հայագիտական ամբիոններ ու կենտրոններ, որոնց հետ համատեղ աշխատանքը կը նպաստի հայ ժողովրդի հարուստ մշակութային ժառանգութեանն ուսումնասիրութեանն ու նուաճումների քարոզչութեանը, աշխարհում նրա քաղաքակրթական տեղի ու դերի ընկալմանը:

Հայագիտութիւնը մշակույթի, պատմութեան, հայերէնագիտութեան,

ժամանակակից հայ տնտեսագիտութեան ճիւղերի՝ մեր երկրի իւրապատկութիւններից բխող խնդիրների ուսումնասիրութիւնը եւ գիտական ընդհանրացումն իրենց բարերար ազդեցութիւնը կ'ունենան Հայաստանի Հանրապետութեան տնտեսական ու հասարակական կեանքի զարգացման վրայ, կը նպաստեն սեփական դիւանագիտական, իրաւագիտական, ընկերային եւ այլ դպրոցների զարգացմանը:

Հայագիտական հիմնարար հետազոտութիւններն ու նուաճումները մեծապէս կը նպաստեն Հայաստանի Հանրապետութեան ներքին եւ արտաքին քաղաքականութեան ձկուն հայեցակարգի մշակմանը, ազգային անվտանգութեան ապահովմանը, կրթական համակարգը բարելաւելու եւ հայրենիքի զարգացած ու նուիրեալ քաղաքացի դաստիարակելու գործին:

Ներկայ փուլում Հայաստանում իրականացուած են բարեփոխումներ կրթութեան ու գիտութեան ոլորտում: Այդ փոփոխութիւնների իրականացումը պատճառաբանուած է կրթութեան ու գիտութեան ոլորտի մերձեցման անհրաժեշտութեամբ: Կառավարութեան կողմից շրջանառուող մի նախագծի համաձայն նախատեսուած է հանրապետութիւնում գործող երկու տասնեակից աւելի բարձրագոյն ուսումնական հաստատութիւնների թիւը խիստ կրճատել եւ խոշորացուած այդ բուհերի գիտական ներուժը հարստացնել գիտահետազոտական հիմնարկներին աշխատակիցներին հաշուին: Սակայն նման մօտեցումը կարող է յանգեցնել գուտ գիտահետազոտական հիմնարկների եւ ընդհանրապէս ազգային արժէք հանդիսացող ՀՀ Գիտութիւնների Ակադեմիայի լուծարմանը, ինչը կը նշանակի լուրջ հարուած հայոց գիտութեանը:

Մասնագիտական առումով հանրապետութիւնն ունի մեծ ներուժ, սակայն հարկ է նշել, որ եթէ այսօր լուրջ քայլեր չձեռնարկուեն, ապա հայագիտութիւնը չի կարողանալ դուրս գալ ներկայիս ճգնաժամային վիճակից: Կընդհատուի հայագիտական դպրոցի վերարտադրութեան գործընթացը: Ուստի անհրաժեշտ է առաւելագոյնս նպաստել երիտասարդ կադրերի պատրաստման գործին: Հարկ է լուրջ քայլեր ձեռնարկել նաեւ արտասահմանային գիտական կենտրոններում երիտասարդ կադրերի պատրաստման ուղղութեամբ:

(Մելքոնեան «Հայագիտութիւնը Հայաստանի ազգային անվտանգութեան համակարգում» վերնագրի տակ պատասխանած է խմբագրութեանս յղած չորս հարցումներուն:

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՆ
ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ
(200 ԵՈԳԻ ՂԱՄԱՐ)

ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՂԱՄԱՐ

1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104

ԸՆՈԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680

Ջապէլ Եսայեան (1878 - 1943)

Շարունակուած էջ 16-էն

1903-ին լոյս կը տեսնէ գրողին առաջին վէպը՝ «Սպասման Սրահին Մէջ» խորագիրով, որ նախապէս թերթի մէջ տպագրուած էր Զօպանեանի «Մարիկ» երկշաբաթաթերթին մէջ: Յիրաւի, փարիզեան կեանքէ առնուած դրուագ մըն է սոյն վէպը, որուն մէջ երիտասարդ՝ սակայն աղքատ մայր մը՝ Էվա, կը փորձէ իր վտիտ ստիւքներէն բնութեան զլացած կաթը ապահովել մայրանոցի միջանցքներուն մէջ՝ վկան դառնալով հիւանդանոցի պաշտօնեաներու անխիղճ վերաբերմունքին:

Յստակ է, որ Եսայեան Պոլիս վերադարձած է հսկայական տպաւորութիւններով, որ անսպառ նիւթ պիտի ապահովէին իր յառաջիկայ գործերուն: Գրական-հասարակական խայտաբղետ իրաւերը, ուսանողական միջավայրը, փարիզեան կեանքը, հարկաւ քիչ նիւթեր չեն Եսայեանի միտքին մէջ՝ մարդկային յարաբերութիւններու բարդ մեխանիզմը հետախուզելու համար: Իր կեանքի այս ժամանակահատուածը լուսարձակի տակ առնելով վիպասանը կը հաստատէ, թէ այդ ժամանակաշրջանը որոշ ազդեցութիւն ունեցած է իր վրայ եւ իր աշխարհայեացքի կազմաւորման մէջ: Այսպէս է, որ յետագային, նորավէպը եւ վիպակը մնացին Եսայեանի նախասիրած գեղարուեստական ժանրերը, ստեղծագործելով «Մրցումը», «Խաբող Նայուածքը», «Սատարաֆ», «Ժիւլի» նորավէպերը, որոնց մէջ իր մտասեւեռումները կ'ըլլան անհատի այլաբան շարունակը հասարակական այլաբանի շարունակը թիւններուն մէջ: Այս երկերուն մէջ ան նուրբ ձեւով կը նկատէ մարդուն եւ իրականութեան միջեւ բախումի ողբերգական վախճանը: Վերոնշեալներու շարքին նոյն ժանրի պատկերներ են նաեւ «Մարդը», «Հանելուկը», «Սիրոյ Վրէժը», «Ստուերը» եւ այլ նորավէպեր:

Միւս կողմէ, «Ապուշը», «Աչքերը», «Վերջու շուններ», «Յանցաւոր Կինը» նորավէպերուն ու պատմութեան քննարկներուն մէջ գրողը պատկերելով թշուառն ու խեղճը, տեսնելով մարդիկը գրկանքի ու հալածանքի աշխարհէ ներս, կը յաջողի անոնց մէջ արտացոլացնել բռնադատութեան հետեւանքով դատապարտուածի անոնց հոգեբանութիւնը: Այս բոլորին վրայ կը բարդուին յուսալքիչ քայլերու դիմումը մարդոց, որոնց պոռթկումն մին նաեւ ակնատես կը դառնանք վիպասանին անդրանիկ վէպին մէջ:

Վիպագրութեան առնթեր, Եսայեանի տաղանդը կը փայլի հրապարակախօսական եւ գրաքննադատական մարզերու մէջ: Այդ շրջանի Եսայեանի հրապարակախօսութեան հիմնական թեման կանանց հարցն էր: «Կնոջ Հարցը», «Նոր Կինը», «Մեր Կիները», «Մեր Պատիկները», «Արդուգարդը եւ Նորաձեւութիւնը», «Կնոջ Տրպարներ - Փարիզուհին», «Ռուս Ուսանողուհին Փարիզի Մէջ», «Տիկին Մատակեան եւ Մեր Պատիկները», «Մեր Վարժուհիները» եւ այլ հրապարակագրական էջերու մէջ, Եսայեան կ'արծարծէ խնդիրներ, որոնք նպատակաւորուած են կնոջ բարոյական ու հոգեմտաւոր վիճակը բարեփոխելու, նոյն ստեղծելու ծէրով կնոջ իրաւունքի, ընկերային, պատմական եւ հոգեբանական

աղբերակները: 1905-ին Եսայեան կրկին կը մեկնի Փարիզ. այստեղ կը մնայ մինչեւ Օսմանեան սահմանադրութեան հռչակումը՝ 1908 Յուլիս եւ կը մասնակցի պոլսահայ գրական-հասարակական կեանքի եռուգեռին, հանդէս կու գայ մամուլի էջերու մէջ: Նոյն տարին յաջորդաբար լոյս կը տեսնեն իր «Սկիւտարի Վերջալոյսներ» եւ «Կեղծ Հանճարներ» (նախ տպուած «Արեւելեան Մամուլ»ի մէջ) վէպերը, 1906-ին՝ «Հլուները եւ Ըմբոստները», 1907-ին՝ «Շնորհքով Մարդիկ» եւ «Մոլորումը» վիպակները, որոնք մեր ազգին անխորտակելի կիրքով, անխառն արցունքով ու կարօտով յօրինուած՝ առաջին անգամ կին գրող է մը կը պաշտպանուին առնատիպ յորդութեամբ, արեւմտահայ արձակին՝ վիպագրութեան շքերանքը, իմաստասիրութիւնը բարձրացնելով հպարտագին տղայացի:

1915-ի Մեծ Եղեռնէն հրաշքով փրկուած Յակոբ Օշական մը՝ որ շուրջ յիսուն տարեկանին իր «Մնացորդաց»ի հաստափոր հատորները մոնագի մոլեգնութեամբ մը պիտի արարչագործէր Մելգոնեանի «Կղզի»էն ներս ու չորս որմերու անդորրաւէտութեամբ սպառագէն՝ 30-ականներու սկիզբները, Ջապէլ Եսայեան 2-3 տարուան ընթացքին երկտասնամեակ մ'առաջ նուաճած էր գագաթը վիպագրութեան, դեռ 30 տարիքը չբոլորած, եւ ասիկա երկնառաք տաղանդի մը ցուցանիչ է միտքի փայլակնային շողարձակումներով, Գեղապաշտ սերունդի կարկառուն ներկայացուցիչի մը կողմէ՝ յանձին Ջապէլ Եսայեանի:

«Սկիւտարի Վերջալոյսները» որ վիպագիրին լաւագոյն երկերէն մէկն է, վիպական պատմումը այստեղ տրուած է առաջին դէմքով: Հերոսը՝ Ջապէլ Յովհաննէսեանը, վերջուշերտ մէջ կը գեղու իր մանկութեան ու պատանութեան վայրերու կարօտը: Մարդը եւ բնութիւնը, մարդը բնութեան հետ, բնութեան դիմաց՝ մերթ ներդաշնակուած, ամբողջութիւն մը դարձած, մերթ ալ հակադրութեան մէջ են: Բախելով շրջապատի մարդոց՝ հեղինակը փորձառութեամբ կը համոզուի, որ չկայ այլ ելք եւ պէտք է համակերպիլ: Ու գծելով շրջապատի եւ ընկերային միջավայրի ընդհանուր պատկերը՝ Եսայեան կը գրէ. «Թունաւոր, պրպտող, լրտեսող նայուածքներ, անմաքուր զգացումներ, կեղծուած հոգիներ, ու աստուածային, սակայն, ասոնք ամէնքն ալ պարկեշտ, պատուաւոր եւ խելացի մարդիկ են»: Հեզնական ոճով ըսել կ'ուզէ՝ պատուաւոր եւ խելացի մարդիկ կը ճանչցուին: Այդ միջավայրը կը ստիպէ Եսայեանը մշակելու շատ դառն համոզմունք: Ու ասոր կը հետեւի գրողին ծանրածանր խոստովանութիւնը. «Մարդուս փոքրագրութեան, տիմար քինախնդրութեան վրայ ապշած մնացի»:

«Կեղծ Հանճարներ» վիպակը Եսայեանի լաւագոյն երգիծական ստեղծագործութիւնն է, որ իր ժամանակին գտած է լայն արձագանգ ու արժանացած բուռն եւ վիճաբանական քննարկումներու: 1905-1907 թուականներուն ան առաջին անգամ հրատարակուելէ ետք «Արեւելեան Մամուլ»ին մէջ, առանձին գիրքով լոյս կը տեսնէ 1910-ին: Այստեղ պիտի ընդգծել, որ գրական քննադատութիւնը յիշ-

եալ հատորը այդ ժամանակ բնութագրեց որպէս «ճշմարիտ արուեստագէտ խառնուածքի արտայայտութիւն»: Արուեստի տեսակէտէ՝ կատարեալ տիպարներ առկայ են այստեղ, իրենց անհատականութեամբ ու ամբողջականութեամբ, հետաքրքրական ու կենդանի բնաւորութիւններով: Յատկապէս ոսկեցոլուն է գլխաւոր հերոսը՝ Տաճատ Չարքեան տիպարը, որ՝ ինչպէս ենթադրած են ժամանակի քննադատները, ան ունի իրական նախատիպ՝ յանձին Տիրան Չրաքեանի (Ինտրա): Վիպակի հերոսներուն մասին դիպուկ են Եսայեանի հետեւեալ մտորումները. «Արդարեւ, բոլոր այդ կեղծ հանճարներէն ոմանք սիրած են ու ոմանք այլ տեսակ մը գլխութիւններ շնչած են ինծի. իրենց անկալուն, խռովուած ու պղտոր հոգիները ինծի սիրելի ծալքեր ունեցած են երբեմն: Օրեր եղած են, որ իրենց հոգերովը տանջուած, իրենց յոյսերովը օրօրուած ու իրենց երազներովը երազած են: Զիրենք չեն տեսներ բնաւ թշնամի աչքերով՝ այլ ընդհակառակը, տեսակ մը խանդակաթ հրայրքով, որուն մէջ երբեմն դառնութիւն, երբեմն ցաւ ու երբեմն ալ կարօտ կայ»:

«Հլուները եւ Ըմբոստները» վիպակը (1906)՝ պոլսահայ տառապայեղ կեանքէ քաղուած ու նախապէս թերթի մէջ տպուած Եգիպտոսի «Ազատ Բեմ»ի մէջ, համեմատաբար աւելի արմատական ձեւով կը շոշափէ ժողովուրդին ընկերաքաղաքական ազատութեան հարցը: Այստեղ վիպագիրը նկարագրելով քաղաքական հալածանքներու շարժառիթ եղած Կարմիր սուլթանին դէմ կատարուած մահափորձը՝ կ'առաջադրէ «մահ կամ ազատութիւն» սկզբունքը, յանգելով այն եզրակացութեան, որ «ստրկութիւնը եւ ըմբոստութիւնը չէին կրնար գիրար հասկնալ»:

Իրապաշտական-հոգեբանական արձակի գլուխ-գործոցներէն է Եսայեանի «Շնորհքով Մարդիկ» վիպակը (1907), որուն շուրջ հաւաքուած միտքերն ու կարծիքները ատենին յառաջացուցին բուռն բախումներ: Այդ ժամանակի «Մասիս» հանդէսը՝ որ դրուատական

տողերով գրած է, թէ՛ Եսայեան «հմայիչ նկարագրող եւ խորաթափանց դիտող է», վեր առնելով վիպասանուհիին տաղանդը՝ կ'ընդգծէ, որ «Տիկին Եսայեան նրբատես հոգեբան մըն է, մեծապէս ընդունակ թարգմանելու մարդկային բոլոր խոր կիրքերն ու յուզումները՝ իրենց հարազատ եւ թաքուն գոյներովը»: Արդարեւ, քաղքենի աշխարհի յոռի բարքերը, եսպաշտութիւնը, մարդու հոգիի այլանդակումն ու աղճատումը սոյն վիպակին մէջ կ'արտացոլան նրբահիւս մանրամասնութիւններով, ընկերային-հոգեբանական ընդհանրացման զարմանալի ուժականութեամբ: Օրինակ՝ Մարգիս եւ Միսաք էֆէնտիները, տիկին Նոյեմին ու Գալէմեանը, Միւսայէօ Գալուստը եւ Միքէ էֆէնտին «բարձր դասակարգ»ի անդամներ են, որոնց համար մարդկութեան չափանիշը անոնց գրաւած դիրքին եւ դրամին կ'ընթացի կ'որոշուի»:

«Եւփիմէ» վիպակը՝ գրառած 1909-ին, Օսմանեան սահմանադրութեան հռչակումէն ետք, կեանքի խոր ըմբռնումով յատկանշուող եւ իրապաշտական շողախով յագեցած, նաեւ գեղարուեստական լաւագոյն գործերէն մէկն է վիպասանուհիին: Վիպակը ծանօթ է նաեւ «Երբ Այլեւս Չեն Սիրեր» եւ «Պատուանդանը» խորագիրներով: Նոյն տարուան Ապրիլին երբ իշխանութեան գլուխ կու գան երիտթուրքերը՝ վերջինները «կը կազմակերպեն Կիլիկիոյ սպանդը»: Այս ծանր ժամանակներուն կը կազմուին մտաւորականներէ բաղկացած պատուիրակութիւններ, որ կը մեկնին Ատանա, Մերսին, Սիւս եւ այլ բնակավայրեր՝ աշխարհին պատմելու այս բոլորի հետեւանքները: Պատուիրակութիւններու շարքին կ'ըլլայ նաեւ Ջապէլ Եսայեան, որ իր շարք մը յօդուածներուն («Ջայներ Որբերու Թշուառութեան», «Աղէտի Զոհերէն», եւ այլն) մէջ կը նկարագրէ տեղի հայ բնակչութեան սարսափելի ու ողբերգական վիճակը՝ փաստեր հաւաքագրելով որբերու յուսալքիչ կեանքէն:

(Շարունակելի)

ՄԱՍԻՍ

ՀԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year)

* \$50,00 * \$100,00 (first class) for USA

\$ 125,00 (Air Mail) for Canada.

\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State:----- Zip Code:-----

Country: -----

Tel:-----

Email:-----

«Ինթեր» Պարտութեան Մատնեց «Ֆիորենթինային»

Իտալիոյ առաջնութեան 22-րդ հանգրուանին առաջատար «Ինթերը» ֆլորենտիայի մէջ հիւրընկալեց «Ֆիորենթինային» ու յաղթանակ արձանագրեց նուազագոյն՝ արդիւնքով:



Միակ կողմ 14-րդ վայրկեանին նշանակեց աշխարհի ախոյեան Արժանթինի հաւաքականի յարձակող Լաուտարո Մարթինեսը:

Հայաստանի հաւաքականի նախկին ակադ, կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանն «Ինթերի» հիմնական կազմին մէջ էր եւ խաղցաւ ամբողջ հանդիպումը:

«Ինթեր» (21 խաղ) 54 կէտով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը եւ 1 կէտ առաջ է երկրորդ տեղը գտնուող Թուրինի «Եւոլվենթուսէն» (22 խաղ):

Անգլիոյ Գաւաթ «Մանչըսթըր Եունայթըտի» Յաղթանակը՝ 4:2

Ֆուտպոլի Անգլիոյ Գաւաթի մրցաշարքի 1/16 եզրափակիչին «Մանչըսթըր Եունայթըտ» հիւրընկալեց «Նոթիոնթըմ Քաունթիին» եւ յաղթեց 4:2 արդիւնքով:



1/8 եզրափակիչին «Մանչըսթըր Եունայթըտի» մրցակիցը պիտի ըլլայ «Պրիսթոլ Սիթի» - «Նոթիոնթըմ Ֆորեսթ» մրցումին յաղթողը: Այս խումբերու առաջին հանդիպումը աւարտեցաւ 0:0 եւ հետեւաբար պիտի կատարուի երկրորդ խաղ:

«Լիվերփուլ» Հաւաս 1/8 Եզրափակիչ

«Լիվերփուլ» հասաւ Անգլիոյ Գաւաթի 1/8 եզրափակիչ: Գերմանացի Յուրգեն Կլոպի գլխաւորած խումբը սեփական դաշտին վրայ մրցեցաւ «Նորուիչ Սիթի» հետ եւ յաղթեց 5:2 արդիւնքով:

1/8 եզրափակիչին «Լիվերփուլի» մրցակիցը պիտի ըլլայ «Ուոլթհորտ» - «Սաութհեմթըն» գոյգի յաղթողը: Այս խումբերու առաջին խաղը 1:1 հաւասար վերջացած է: Խումբերը պիտի կատարեն երկրորդ հանդիպում մը:

«Մանչըսթըր Սիթի» Պարտութեան Մատնեց «Թորքնհեմին»

Անգլիոյ Գաւաթի մրցաշարքի 1/16 եզրափակիչին ախոյեան եւ գաւաթակիր «Մանչըսթըր Սիթի» հիւրընկալեց Լոնտոնի «Թորքնհեմին»: Քաթալոնացի Խոսեպ Կուարտիլայի գլխաւորած խումբը յաղթեց նուազագոյն արդիւնքով: Միակ կողմ 88-րդ վայրկեանին նշանակեց Նոլանտացի պաշտպան Նաթան Ագէն:

Մատրիտի «Ռեալը» Պարտութեան Մատնեց «Լաս Փալմասին» Եւ Առաջատարն Է

Սպանիոյ առաջնութեան 22-րդ հանգրուանին փոխախոյեան «Ռեալ» հիւրընկալեց «Լաս Փալմասին»: Իտալացի Քառլո Անչելոտիի գլխաւորած խումբը հասաւ յաղթանակի 2:1 արդիւնքով:



21 խաղէն յետոյ «Ռեալ» 54 կէտով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը եւ 2 կէտ առաջ է երկրորդ տեղը գտնուող «ժիրոնայէն» (21 խաղ):

«Պարսելլոնան» Պարտութիւն Կրեց՝ 3:5

Սպանիոյ առաջնութեան 22-րդ հանգրուանին ախոյեան «Պարսելլոնան» սեփական դաշտին վրայ պարտութիւն կրեց «Վիլլառեալէն»՝ 3:5 արդիւնքով:

21 խաղէն յետոյ «Պարսելլոնան» 44 կէտով երրորդն է եւ երկրորդ տեղը գտնուող «ժիրոնայէն» (21 խաղ) ետ է 8 կէտ:

«Լիվըրքուսըն» Հաւասարեցաւ Ռիվերադարձաւ Առաջին Տեղ

Ֆուտպոլի Գերմանիոյի առաջնութեան 19-րդ հանգրուանին «Լիվըրքուսըն» սեփական դաշտին վրայ մրցեցաւ «Պորուսխայի» հետ եւ բաւարարուեցաւ հաւասար արդիւնքով:

Հայաստանի հաւաքականի յարձակող Հրանտ-Լէոն Ռանոսը

Յանիկ Սիներ Թենիսի Աւստրալիոյ Բաց Մրցաշարքի Ախոյեան

Աշխարհի չորրորդ ռակեթ Յանիկ Սիներ նուաճեց Աւստրալիոյի բաց առաջնութեան ախոյեանի տիտղոսը:



Եզրափակիչին 22-ամեայ իտալացի թենիստը յաղթանակ արձանագրեց աշխարհի երրորդ ռակեթ, 27-ամեայ ռուս Տանիիէլ Մետվետեւի նկատմամբ: Առաջին երկու սեթերուն 3:6, 3:6 արդիւնքով պարտուելէ յետոյ Յանիկ Սիներ յաջող երեք սեթերուն առաւելութեան հասաւ 6:4, 6:4, 6:3 արդիւնքով: Պայքարը տեւեց 3 ժամ եւ 46 վայրկեան:

Յանիկ Սիներ առաջին տիտղոսը նուաճեց «Մեծ սաղաւարտի» մրցաշարքերուն մէջ: Ան նաեւ միակ իտալացին է որ արժանացած է Աւստրալիոյի բաց մրցաշարքի տիտղոսին: Աւստրալիոյ բաց առաջնութեան մրցանակային հիմնադրամը 58 միլիոն տոլար է:

Աշխարհի Գաւաթ. Բենիկ Խլղաթեան - Էլմիրա Կարապետեան Զոյգը՝ Արծաթ Մետալակիր



Եզրափակիչի մայրաքաղաք Գահիրէի մէջ կատարուող հրաձգութեան աշխարհի գաւաթի խաղարկութեան Հայաստանի Բենիկ Խլղաթեան - Էլմիրա Կարապետեան զոյգը նուաճեցին արծաթէ մետալ 10 մետրէն օդամղիչ ատրճանակով միքս մրցաձեւի ընթացքին:

Եզրափակիչին Հայաստանի զոյգը 7:17 արդիւնքով պարտուեցաւ Հնդկաստանի խումբին:

Նոյն մրցաձեւին Գէորգ Մելքոնեան - Նարէ Գաբրիէլեան զոյգը գրաւեցին 20-րդ տեղը:

Յուրկեն Կլոպը Կը Հեռանայ «Լիվերփուլէն»

Գերմանացի Յուրկեն Կլոպը մրցաշրջանի աւարտէն յետոյ կը հեռանայ «Լիվերփուլի» գլխաւոր մարզիչի պաշտօնէն, կը հաղորդէ անգլիական ախումբի մամուլի ծառայութիւնը:



«Կը հասկանամ, որ շատերու համար այս նորութիւնը ցնցիչ է, երբ առաջին անգամ կը լսէք, բայց ակնյայտ է, որ կրնամ բացատրել որոշումս:

«Ես կը սիրեմ բացարձակ ամէն ինչ այս ախումբին մէջ, քաղաքը, կը սիրեմ, ախումբի բոլոր երկրպագուներուն, կը սիրեմ խումբը, աշխատակիցները, կը սիրեմ ամէն ինչ այստեղ: Բայց եթէ կ'ընդունիմ այս որոշումը, կը նշանակէ՝ ես համոզուած եմ, որ այս այն որոշումն է, որ պէտք է ընդունիմ:

«Ես չունիմ ուժ: Հիմա ես խնդիրներ չունիմ, բայց ակնյայտ է, որ ես գիտէի՝ ուշ թէ կանուխ ստիպուած եմ յայտարարելու այս մասին: Ես գիտեմ, որ չեմ կարող կատարել այս աշխատանքը նորէն:

«Այսքան տարիներէ յետոյ ես պէտք է ձեզ ըսեմ միայն ճշմարտութիւնը եւ այս է ճշմարտութիւնը»,- Կլոպի խօսքը կը մէջբերէ ախումբի կայքը: 56-ամեայ մասնագէտը «Լիվերփուլը» կը գլխաւորէր 2015-ի Հոկտեմբերի 8-էն ասդին: Այս ընթացքին խումբը նուաճած է Անգլիոյ ախոյեանի, գաւաթի, սուպերգաւաթի, Անգլիական լիգայի գաւաթները: Ինչպէս նաեւ Եւրոպայի Ախոյեաններու Լիգայի, աշխարհի ախումբային առաջնութեան եւ Եւրոպայի սուպերգաւաթի տիտղոսները:

«Պորուսխայի» պահեստայիններու մէջ էր, սակայն խաղին չմասնակցեցաւ: «Լիվըրքուսըն» 49 կէտով առաջատարն է եւ երկրորդ տեղը ընթացող ախոյեան Միլնիթի «Պայքընէն» առաջ է 2 կէտով: